Հավելված
Հայաստանի Հանրապետության
Բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի ղեկավարի
2023թ. հունվարի 31-ի N 13-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք. Երևան, 0009, Կորյուն փողոց 15, **կայք՝** http://www.ecoinspect.am/
☎ հեռ. (015) 48-48-48**, Էլ. փոստ՝** info@ecoinspect.gov.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ……- 3 -

1. *Տարեկան գործունեության ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն……- 5 -*
2. *Վերահսկողական աշխատանքների ամփոփ ցուցանիշները՝ 2020-2021թթ. համեմատությամբ……- 10 -*
3. *Ստուգումներ քանակը, բնութագրերը, հիմքերը, տևողությունը և արդյունքները…- 16 -*
4. *Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները ……- 22 -*
5. *Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն……- 23 -*
6. *Կենսաբազմազանության վերահսկողության ոլորտ ……-25-*
7. *Մթնոլորտային օդի, ջրերի, հողերի, վտանգավոր նյութերի և թափոնների գործածության օգտագործման և պահպանության ուղղություններ ……-34-*
8. *Ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության ոլորտ ……-44-*
9. *Լաբորատոր հետազոտություններ ……-55-*
10. *Խորհրդատվական գործունեությունը……- 58 -*
11. *Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն……- 62 -*
12. *Օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները՝ …… - 67 -*
13. *Կարողությունների զարգացում……- 67 -*
14. *Հատիքացուցակի փոփոխություն, թափուր հաստիքների համալրում …… -68-*
15. *Աշխատողների խրախուսում և ծառայողական քննություններ ……-68-*
16. *Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ, բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին……..- 69 -*

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) 2022 թվականի գործունեության տարեկան հաշվետվության (այսուհետև՝ Հաշվետվություն) կազմման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N733-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ կիրառում պատասխանատվության միջոցներ բնապահպանության ու ընդերքի ոլորտներում, ձեռնարկում միջոցներ վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ: ՈՒղղություններն են՝

- մթնոլորտային օդի պահպանություն
- ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն
- հողերի օգտագործում և պահպանություն
- ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն
- կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն
- վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ
- պետական փորձաքննություն
- բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ
- վիճակագրական հաշվետվություններ

Տեսչական մարմնի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝

- բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման

նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը.

- շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ Տեսչական մարմնի համար սահմանվել է թվով 194 հաստիք, որից ներկայումս 47-ը՝ թափուր:

Տեսչական մարմնի լիազորությունների իրականացման նպատակով 2022 թվականի կտրվածքով իրականացվել է 919,632,200 ՀՀ դրամի բյուջետային հատկացում՝ կատարողականը կազմում է 95,5%: Նախորդ երկու տարիների կտրվածքով ՀՀ պետական բյուջեի հատկացումները ներկայացված են ստորև:

2020 թվականի կատարողականը կազմում է 92,4%, 2021 թվականի կատարողականը կազմում է 97,2%:

Ֆինանսավորման ծավալը	**2020թ. ՀՀ պետական բյուջե /հազ. ՀՀ դրամ/**	**2021թ. ՀՀ պետական բյուջե /հազ. ՀՀ դրամ/**	**2022թ. ՀՀ պետական բյուջե /հազ. ՀՀ դրամ/**
Ընդամենը՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, այդ թվում՝	**870,213.4**	**881,040.3**	**919,632.2**
Ընթացիկ	**860,508.6**	**872,610.3**	**916,632.2**
Կապիտալ	**3,704.8**	**8,430.0**	**3,000.0**

Տարեկան գործունեության ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն

Տարեկան գործունեությունն իրականացվել է՝ առաջնորդվելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից 2021 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 02-Լ և 03-Լ որոշումներով հաստատված 2022 թվականի տարեկան գործունեության և ստուգումների ծրագրերով:

2022 թվականի 12 միջոցառումից 10-ը կատարվել է, իսկ 2-ի վերաբերյալ ներկայացվում է ստորև.

h/h	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ընթացքը
1	2	3	4
1	Մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների գործածության, սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ոլորտային ուղղություններում ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 23 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	Հրապարակվել է 129 հանձնարարագիր, որից 1-ն ուժը կորցրած է ճանաչվել, իսկ 1 ստուգում չի իրականացվել տնտեսավարողի սնանկության գործընթացով պայմանավորված
		թվով 43 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
		թվով 39 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
		թվով 25 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
		«Հայտնաբերված վարչական իրավախախտումների, վարչական պատասխանատվության ենթարկված անձանց թվաքանակի և նշանակված	

2	Տեսչական մարմնի կողմից 2021-2022 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական և կանխարգելիչ գործողությունների արդյունքներով վիճակագրական հաշվետվությունների կազմում և ներկայացում ՀՀ Վիճակագրական կոմիտե	տուգանքների չափերի մասին» Ձև 1-վի հաշվետվություն:	ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ Վիճակագրական կոմիտե
		«Ամփոփ հաշվետվություն Բնապահպանության և բնական պաշարների արդյունավետ օգտագործման պետական վերահսկողության մասին» Ձև թիվ 1-բնապահպանություն պետական վիճակագրական հաշվետվություն:	
		ՀՀ-ում գործող տնտեսավարող կազմակերպությունների կողմից 2021 թվականի ընթացքում ներկայացված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների ամփոփ հաշվետվություն:	
3	Տեսչական մարմնի էլեկտրոնային վերահսկողության համակարգի ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքի մշակում, վերահսկողության համակարգի ստեղծում՝ համապատասխան էլեկտրոնային ծրագրի և սարքավորումների ապահովմամբ:	Տեսչական մարմնի 187 աշխատակիցների համար էլեկտրոնային համակարգին հասանելիության ապահովում, վերահսկողական արժանահավատ արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն արտացոլում:	09.08.2022թ.թիվ 01/05/3362-2022 գրությամբ դիմել ենք ԲՏԱ նախարարարին, որին ի պատասխան 17.08.2022թ. թիվ 01/10/6612-2022 գրությամբ կազմակերպվել է քննարկում, 19.08.2022թ. կազմվել է աշխատանքային խորհրդակցության արձանագրությունը:
4	ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N1423-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների գործընթացի նախաձեռնում	Տեսչական մարմինների աշխատանքների գրասենյակ համապատասխան առաջարկի ներկայացում:	14.07.2022թ.01/007/2/2980-2022 գրությամբ ներկայացվել է առաջարկություն՝ Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ

5	«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրացումների գործընթացի նախաձեռնում	Տեսչական մարմինների աշխատանքների գրասենյակ համապատասխան առաջարկի ներկայացում: Օրենսդրական փոփոխություններով նախատեսվում է կենդանական աշխարհի զանգվածային ոչնչացման եղանակներով որս իրականացնելու դեպքերի հետևանքով պատճառված վնասի և բնությանը պատճառված վնասի հատուցման ճշգրիտ չափի հաշվարկման հստակեցում:	01.02.2022թ.01/011/1/330-2022 գրությամբ ներկայացվել է առաջարկություն՝ Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
6	Հատատեղերի շահագործման, թափուկի դուրսբերման և ցանկացած տիպի փայտանյութի տրամադրման գործընթացները կարգավորող օրենսդրական ակտերում փոփոխությունների իրականացման գործընթացի նախաձեռնում	Լիազոր մարմին համապասխան գրության ներկայացում	12.09.2022թ.01/011/5/3933-2022 գրությամբ ներկայացվել է առաջարկություն՝ լիազոր մարմնին
7	ՀՀ վարչապետի 07.12.2020թ Ն 1326-Լ որոշմամբ սահմանված «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկուս» համակարգով» ծրագրի 2022 թվականի համար նախատեսված միջոցառումների իրականացում	Տեսչական մարմնի թվով 7 պետական տեսուչների կարողությունների զարգացում միջազգային լավագույն փորձի շրջանակներում, Սևանա լճի և ջրհավաք ավազանի խնդիրների վերաբերյալ բաց հասանելի տվյալներ պարունակող Պոնտոս էլեկտրոնային համակարգի ստեղծում:	2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատանքները ավարտվել են
8	2021 թվականին Երևանի պետական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական,	Տեսչական մարմնի թվով 17 պետական տեսուչների ընդերքօգտագործման	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ 17

	Հայաստանի ազգային ագրարային համալսարանների հետ ստորագրված հուշագրերի շրջանակներում համագործակցության ապահովում:	ոլորտում վերապատրաստում՝ մարկշեյդերական գործի ուսուցում, օգտակար հանածոների գնահատման գործընթացի վերաբերյալ ուսուցում	պետական տեսուչների ընդերքօգտագործման ոլորտում վերապատրաստում՝ մարկշեյդերական գործի ուսուցման աշխատանքների պլան գրաֆիկը և ծառայությունների մատուցման պայմանագիրը գտնվում է կնքման փուլում
		Թվով 15 ուսանողների Տեսչական մարմնում ըստ համապատասխան ոլորտների ուսանողական պրակտիկայի իրականացում	Երևանի պետական, Հայաստանի ազգային ագրարային համալսարանների թվով 10 մագիստրոսներ մասնակցել են ուսանողական պրակտիկայի
9	Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) կողմից անօդաչու թռչող սարքի նվիրաբերության գործընթացի ապահովում	1 հատ երկար թռչող անօդաչու սարքի ձեռքբերում՝ վերահսկողության ընթացքում դժվար հասանելի վայրերի դիտարկման համար (ընդերքօգտագործման ոլորտ, բուսական և կենդանական աշխարհի պահպանության ոլորտ):	ՀՀ կառավարության 17.03.2022թ. «Որպես նվիրաբերութուն գույք ընդունվելու և ամրացնելու մասին» թիվ 325-Ա որոշմամբ
10	Տեսչական մարմնի և Կովկասյան Բնության Հիմնադրամի (ԿԲՀ) կողմից ընդհանուր 30,000 եվրո գումար արժողությամբ սարքերի և սարքավորումների նվիրաբերության գործընթացի ապահովում	1 հատ երկար թռչող անօդաչու սարքի ձեռքբերում, 2 հատ Վազ 2121 մեքենայի ձեռքբերում, 3 հատ համազգեստին ամրակցվող տեսանկարման սարք՝ կենսաբազմազանության ոլորտում արդյունավետ վերահսկողություն իրականցնելու համար:	ՀՀ կառավարության 17.03.2022թ. «Որպես նվիրաբերութուն գույք ընդունվելու և ամրացնելու մասին» թիվ 325-Ա որոշմամբ
11	Տեսչական մարմնի 20 տեսուչներին ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի	Վերահսկողության արդյունավետության բարձրացում, այդ թվում Տեսչական մարմնի թվով 20	ՀՀ ոստիկանության շտաբի 24.06.2022թ. թիվ 2692-2022 գրության հիման վրա իրականացվել է

	օգտագործման հատուկ պատրաստության ուսուցում	աշխատակիցների կարողությունների զարգացում:	կարողությունների զարգացում
12	Տեսչական մարմնի տեսուչների վարքագծի կանոնների սահմանում	Տեսչական մարմնի ղեկավարի հրաման	Ընթացքը չի ապահովվել, քանի որ 20.05.2021թ. թիվ 60-Լ հրամանով հաստատված է եղել ներքին կարգապահական կանոնները:

Համաձայն 2022 տարեկան գործունեության ծրագրի նպատակների՝ Տեսչական մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացրել է բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարում և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելման կամ նվազեցման համար:

2022 թվականին թիրախավորվել է տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները՝

- ✓ հանքարդյունաբերություն
- ✓ անտառային տնտեսություն և հատուկ պահպանվող տարածք
- ✓ շինարարություն
- ✓ էլեկտրաէներգիայի արտադրություն
- ✓ ձկնաբուծություն
- ✓ ջրամատակարարում
- ✓ թափոնների տեղադրում և ոչնչացում
- ✓ արտադրություն
- ✓ զվարճանքների և հանգստի կազմակերպում:

Վերոնշյալ նպատակների իրագործման առնչությամբ իրականացվել են վերահսկողական գործառույթներ (ստուգումներ և վարչական վարույթներ), ինչպես նաև կանխարգելիչ, իրազեկման և խորհրդատվական միջոցառումներ:

Վերահսկողական աշխատանքների ամփոփ ցուցանիշները՝ 2020-2021 թվականների համեմատությամբ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրականացված վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթների արդյունքում արձանագրվել է ընդհանուր 2393 իրավախախտման դեպք, որը 2021 թվականի համեմատությամբ աճել է 14,8%, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 49,1%:

Վերահսկողության ուղղություններով նախորդ երկու տարվա իրավախախտումների դեպքերի համեմատականով արձանագրվել են առավել բարձր ռիսկային ուղղություններ, որոնց քանակական և տոկոսային արտահայտումը ներկայացված է *Աղյուսակ 1-ում:*

Աղյուսակ 1

Հայտնաբերված իրավախախտումների թվի համեմատականը՝ ըստ վերահսկողական ուղղությունների							
h/h	***ՈՒղղությունները***	***2020 թվական***	***2020 թվական %***	***2021 թվական***	***2021 թվական %***	***2022 թվական***	***2022 թվական %***
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	**968**	**60.3**	**1068**	**51.3**	**755**	**31.5**
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	**133**	**8.3**	**95**	**4.6**	**142**	**5.9**
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	**42**	**2.6**	**141**	**6.8**	**179**	**7.5**
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	**92**	**5.7**	**110**	**5.3**	**99**	**4.1**
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	**17**	**1.1**	**71**	**3.4**	**281**	**11.7**
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	**44**	**2.7**	**120**	**5.8**	**108**	**4.5**
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	**13**	**0.8**	**84**	**4.0**	**487**	**20.3**
8	**Վիճակագրական հաշվետվություններ**	**284**	**17.7**	**338**	**16.2**	**279**	**11.7**
9	**Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)**	**11**	**0.7**	**49**	**2.4**	**46**	**1.9**
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	**1**	**0.1**	**7**	**0.3**	**17**	**0.7**
ԸՆԴԱՄԵՆԸ		**1605**	**100**	**2083**	**100**	**2393**	**100**

Վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրված իրավախախտումների հիմքով հարուցվել է 930 վարչական վարույթ, որից 241-ը միայն ստուգումներով: Վարչական վարույթները հարուցվել են Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, ՀՀ վարչապետի հանձնարարականների, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների, ահազանգերի և այլ հիմքերով: Տեսչական մարմնի կողմից վարչական վարույթների քանակը նախորդ երկու տարվա համեմատականով ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Համաձայն այդ տվյալների 2022 թվականին հարուցված ընդհանուր վարչական վարույթների թիվը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 9,3%, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 3,5%, իսկ միայն ստուգումներով վարչական վարույթների թիվը 2021 թվականի համեմատությամբ աճել է 35,4%,իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 119,1%:

Աղյուսակ 2

h/h	***Ժամանակահատվածը***	***Հարուցված վարչական վարույթների***	
		քանակը	***որից՝ ստուգումներով***
1	*2*	*3*	*4*
1	***2020 թվական***	964	110
2	***2021 թվական***	1025	178
3	***2022 թվական***	930	241

Հարուցված վարչական վարույթների արդյունքում վարչական տույժի են ենթարկվել 749 անձ, որոնց նկատմամբ կիրառվել է թվով 1,022 վարչական տույժ: Նախորդ երկու տարվա համեմատականը կիրառված տույժերի քանակի և վերահսկողական ուղղությունների առնչությամբ ներկայացված է *Աղյուսակ 3-ում*:

Համաձայն այդ տվյալների 2022 թվականին կիրառված վարչական տույժերի թիվը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 10,7%, իսկ 2020 թվականի համեմատությամբ աճել՝ 27,7%:

Հարուցված վարչական վարույթների արդյունքում նշանակված վարչական տուգանքի չափը կազմել է 99,160,000 ՀՀ դրամ: Նախորդ երկու տարվա համեմատականը ըստ առավել ռիսկային ուղղությունների ներկայացված է *Աղյուսակ 4-ում*:

Համաձայն այդ տվյալների 2022 թվականի ընթացքում նշանակված տուգանքի չափը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 4,2%, իսկ 2020 թվականի համեմատությամբ աճել՝ 30,9%:

Աղյուսակ 3

Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տույժերի քանակն՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
Հ/Հ	***Ուղղությունները***	***2020 թվական***	***2021 թվական***	***2022 թվական***
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	324	272	218
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	36	45	28
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	37	135	154
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	86	107	80
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	16	67	87
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	21	66	63
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	12	75	86
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	254	324	253
9	**Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)**	13	46	40
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	1	7	13
ԸՆԴԱՄԵՆԸ		**800**	**1,144**	**1,022**

Աղյուսակ 4

Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքի գումարի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
h/h	*ՈՒղղությունները*	***2020 թվական***	***2021 թվական***	***2022 թվական***
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	33,836,000	28,780,000	22,340,000
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	2,300,000	4,100,000	2,970,000
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	2,750,000	11,430,000	13,000,000
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	16,110,000	19,820,000	22,230,000
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	1,170,000	3,220,000	4,700,000
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	1,330,000	4,860,000	5,360,000
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	1,350,000	7,070,000	8,130,000
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	15,690,000	19,810,000	16,360,000
9	**Պետական փորձաքննություն**	1,100,000	3,750,000	3,520,000
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	100,000	650,000	550,000
ԸՆԴԱՄԵՆԸ		**75,736,000**	**103,490,000**	**99,160,000**

Վերահսկողական աշխատանքների արդյունքում հաշվարկվել է պատճառված 2,229,199,273 ՀՀ դրամ գումարի չափով վնաս, որից՝

- իրականացվել է 948 շրջակա միջավայրին վնասի հաշվարկ՝ 1,268,020,578 ՀՀ դրամ վնաս (ստուգումներով՝ 453,300,104 ՀՀ դրամ)
- պետությանը պատճառված՝ 961,178,695 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Նախորդ երկու տարվա համեմատականը ըստ առավել ռիսկային ուղղությունների ներկայացված է *Աղյուսակ 5-ում և 6-ում* :

Համաձայն այդ տվյալների 2022 թվականի ընթացքում հաշվարկված վնասի գումարի չափը 2021 թվականի համեմատությամբ աճել է 13,1%, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 43,3%:

Աղյուսակ 5

Տեսչական մարմնի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկի քանակն՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
h/h	*ՈՒղղությունները*	*2020 թվական*	*2021 թվական*	*2022 թվական*
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն	947	1,040	696
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն	85	73	99
3	Մթնոլորտային օդի պահպանություն	12	37	45
4	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	14	18	26
5	Հողերի օգտագործում և պահպանություն	23	98	82
6	Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	0	1	0
ԸՆԴԱՄԵՆԸ		**1,081**	**1,267**	**948**

Աղյուսակ 6

Տեսչական մարմնի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին և պետությանը պատճառված վնասի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների				
				ՀՀ դրամ
h/h	*ՈՒղղությունները*	*2020 թվական*	*2021 թվական*	*2022 թվական*
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն	814,714,436	1,004,640,274	893,690,284
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն	641,856,340	11,705,590	19,823,560
3	Մթնոլորտային օդի պահպանություն	25,227,496	48,678,079	198,171,172
4	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	32,962,318	632,870,525	94,974,272
5	Հողերի օգտագործում և պահպանություն	40,554,156	213,172,424	61,361,290
6	Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	0	60,000,000	0
7	Ընդերքօգտագործում և պահպանություն	0	0	961,178,695
ԸՆԴԱՄԵՆԸ		**1,555,314,746**	**1,971,066,892**	**2,229,199,273**

Տեսչական մարմին և ՀՀ իրավապահ մարմիններ համագործակցություն

Վերահսկողական աշխատանքների արդյունքում իրավապահ մարմիններին ուղարկվել է 661 գործի նյութ՝ 944,178,108 ՀՀ դրամ շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկով: Նախորդ երկու տարվա տվյալները ներկայացված է *Աղյուսակ 7-ում*:

Համաձայն այդ տվյալների 2022 թվականի ընթացքում իրավապահ մարմիններին ուղարկված գործերի քանակը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 25,1%, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 12,9%:

Հարկ է նշել, որ 2022 թվականի ընթացքում ՀՀ իրավապահներին ուղարկված նյութերից թվով 514-ը միայն ապօրինի ծառահատման և փայտանյութի ձեռքբերման վերաբերյալ գործերն են՝ շրջակա միջավայրին պատճառված 884,504,764ՀՀ դրամ վնասի չափով:

Աղյուսակ 7

h/h	***Ժամանակահատվածը***	***Իրավապահ մարմիններին ուղարկված***	
		Նյութերի քանակը	***Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը (ՀՀ դրամ)***
1	*2*	*3*	*4*
1	***2020 թվական***	759	1,245,344,728
2	***2021 թվական***	883	1,263,684,788
3	***2022 թվական***	661	944,178,108

Վերահսկողության արդյունքում ՀՀ պետական բյուջեի մուտքեր

- 2022 թվականի ընթացքում մուտքագրվել է 314,561,597.80 ՀՀ դրամ
- 2021 թվականի ընթացքում մուտքագրվել է 125,698,722 ՀՀ դրամ
- 2020 թվականին ընթացքում մուտքագրվել է 97,376,573.90 ՀՀ դրամ

2022 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի մուտքերը 2021 թվականի համեմատությամբ աճել է 150,3%, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 223%: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ուղարկվել 315 որոշում 38,802,810 ՀՀ դրամի բռնագանձման պահանջով:

Ստուգումներ, քանակը, բնութագրերը, հիմքերը, տևողությունը և արդյունքները

Ստուգումներն իրականացվել են Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 03-Լ որոշմամբ հաստատված ստուգումների տարեկան ծրագրով, ՀՀ վարչապետի հանձնարարականներով, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների հիմքերով:

Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված 267 հանձնարարագրով (թվով 16-ը 2021 թվականից տեղափոխված) իրականացված ստուգումներից՝

- 241-ն ավարտվել է, 20-ը տեղափոխվել է 2023 թվական, իսկ 6 հանձնարարագիր ուժը կորցրած է ճանաչվել,
- կայացվել է վարչական տույժի 444 որոշում,
- կիրառվել է վարչական տույժ՝ 48,160,000 ՀՀ դրամի չափով,
- հաշվարկվել է 1,414,478,799 ՀՀ դրամ վնաս, որից՝ 453,300,104 ՀՀ դրամի շրջակա միջավայրի վնաս, պետությանը պատճառված՝ 961,178,695 ՀՀ դրամ (տեսչական մարմնի կողմից ներկայացված ծավալային ակտերի հիման վրա հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից),
- կազմվել է 209 ակտ և 32 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք,
- տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 117 պարտադիր կատարման հանձնարարական, որից 63-ը կատարվել է:

267 հանձնարարագրով տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ոլորտները

- ընդերքօգտագործում – 92
- էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում - 34
- անտառային տնտեսություններ - 6
- բնության հատուկ պահպանվող տարածքներ - 4
- ձկնաբուծություն - 10
- արտադրություն - 54

- ջրօգատագործում - 9
- թափոնների տեղադրում և ոչնչացում - 19
- շինարարություն – 21
- հյուրանոցներ – 5
- ռեստորաններ և հասարակական սնունդ – 6
- զվարճությունների և հանգստի կազմակերպում - 1
- անասնաբուծություն և բուսաբուծություն - 2
- կենսապաշար – 4

Ընդհանուր ստուգումների կատարողականի համեմատականը նախորդ երկու տարիների հետ			
	2020թ.	2021թ.	2022թ.
Հանձնարարագրերի քանակ, որից՝	**152**	**257**	**267**
նախորդ տարվանից տեղափոխված	18	33	16
հաշվետու ժամանակատվածում հրապարակված	134	224	251
Հանձնարարագրերի կատարողական, որից՝	**152**	**257**	**267**
ուժը կորցրած	9	28	6
ավարտված	110	213	241
հաջորդ տարի տեղափոխված	33	16	20

Ընդհանուր ստուգումներով կայացված որոշումների և տրված պարտադիր կատարման հանձնարարականների կատարողականի համեմատականը նախորդ երկու տարիների հետ					
Տարեթիվ	***Վարչական որոշումների քանակ***	***Վարչական տուգանքի գումարի չափը ՀՀ դրամ***	***Շրջակա միջավայրին պատճառված վնասի չափը ՀՀ դրամ***	***Տրված հանձնարարականների քանակը***	***Կատարված հանձնարարականների քանակը***
2020	87	15,900,000	170,389,408	52	23
2021	232	42,890,000	887,184,537	120	88
2022	444	48,160,000	453,300,104	117	63

Տարեկան ծրագրով նախատեսված 130 ստուգումից 122-ն ավարտվել է (կատարողականը՝ 93,9%), 6-ը տեղափոխվել է 2023 թվական, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել, 1 հանձնարարագիր չի բացվել՝ տնտեսվարող սուբյեկտի լուծարման գործընթացով պայմանավորված:

Արդյունքում 99 տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կայացվել է 280 վարչական տույժի որոշում, կիրառվել է վարչական տույժ՝ 29,250,000 ՀՀ դրամի չափով, կազմվել է 108 ակտ և 14 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 74 պարտադիր կատարման հանձնարարական, որից 42-ը կատարվել է:

Հաշվարկվել է վնաս 730,862,982 ՀՀ դրամի չափով, որից՝

- շրջակա միջավայրին՝ 223,642,972 ՀՀ դրամ
- պետությանը պատճառված՝ 507,220,010 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Ստուգումների տարեկան ծրագրով պլանավորվել էր իրականացնել 130 ստուգում (բարձր-91, միջին-33, ցածր 6): Ավարտված 122 տնտեսավարող սուբյեկտների ստուգումից առաջ և հետո առկա է ռիսկայնության գնահատման հետևյալ պատկերը՝

Ռիսկայնության աստիճանը	*ստուգումից առաջ*	*ստուգումից հետո*
բարձր	84	15
միջին	32	93
ցածր	6	14

Ստուգումների տարեկան ծրագրի կատարողականի համեմատականը՝ նախորդ երկու տարիների հետ			
	2020թ.	***2021թ.***	***2022թ.***
Տարեկան ծրագրով ստուգումների քանակը	**90**	**100**	**130**
հրապարակված հանձնարարագրեր, որից	54	79	129
ավարտված	34	71	122
հաջորդ տարի տեղափոխված	17	7	6
ուժը կորցրած	3	1	1

2022 թվականի արտածրագրային 138 ստուգումից 119-ն ավարտվել է, 14-ը տեղափոխվել է 2023 թվական, 5-ը ուժը կորցրած է ճանաչվել:

Արդյունքում 85 տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կայացվել է 164 վարչական տույժի որոշում ՝ 18,910,000 ՀՀ դրամի չափով, կազմվել է 101 ակտ և 18 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 43 պարտադիր կատարման հանձնարարական, որից 21-ը կատարվել է:

Հաշվարկվել է վնաս 683,615,817 ՀՀ դրամի չափով, որից՝

- շրջակա միջավայրին՝ 229,657,132 ՀՀ դրամ

- պետությանը պատճառված՝ 453,958,685 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Արտածրագրային ստուգումների կատարողականի համեմատականը՝ նախորդ երկու տարիների հետ			
	2020թ.	***2021թ.***	***2022թ.***
Արտածրագրային ստուգումների քանակը, որից՝	**98**	**178**	**138**
ավարտված	76	142	119
հաջորդ տարի տեղափոխված	16	9	14
ուժը կորցրած	6	27	5

138 հանձնարարագրերի հրապարակման հիմքերը.

- 2021 թվականից տեղափոխված տարեկան ծրագրով – 7 ստուգում, որից 6-ը ավարտվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- ՀՀ վարչապետի հանձնարարականով - 29 ստուգում, որից 22-ը ավարտվել է, 7-ը տեղափոխվել է 2023թ,
- Իրավապահ մարմիններից ստացված գրություններով - 20 ստուգում, որից 16-ը ավարտվել է, 2-ը ուժը կորցրած է ճանաչվել, 2-ը տեղափոխվել է 2023թ,
- ՀՀ նախարարարությունների գրություններով - 24 ստուգում, որից 21-ը ավարտվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել, 2-ը տեղափոխվել է 2023թ,
- Պետական եկամուտների կոմիտեից ստացված գրություններով - 17 ստուգում, որից 15-ը ավարտվել է, 2-ը տեղափոխվել է 2023թ,
- քաղաքացիներից ստացված բողոք-դիմումներով - 18 ստուգում, որից 17-ը ավարտվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- Տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրություններով - 5 ստուգում, որից 5-ն էլ ավարտվել է,

- Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում տնտեսավարողներին տրված խախտումները վերացնելու մասին հանձնարարականների կատարման հիմքով - 18 ստուգում, որից 17-ը ավարտվել է, 1-ը տեղափոխվել է 2023թ:

2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմում է 10 օր, ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների (ինչպես նաև գործուղման) միջին տևողությունը՝ 5 օր, իսկ մեկ ստուգմանը (ինչպես նաև գործուղման) մասնակցած աշխատողների քանակը՝ միջինում 3:

2021 թվականի հոկտեմբերի 17-ից Տեսչական մարմինը «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 29.1 հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակում իրավունք է ձեռք բերել իրականացվող ստուգումների կամ դիտարկումների շրջանակներում անհապաղ կասեցնել բնապահպանական օրենսդրության խախտումներով իրականացվող տնտեսավարողների գործողությունները կամ գործունեությունը: Իրականացված ստուգումների կամ դիտարկումների շրջանակներում կիրառված կասեցումների քանակը նախորդ տարվա համեմատականով ներկայացված է ստորև.

Ստուգումների արդյունքներով կասեցված գործողության կամ գործունեության վեաբերյալ 2021-2022 թվականների համեմատական						
	Գործողության կասեցում		*Գործունեության կասեցում*		*Կասեցման վերացում*	
	2021	*2022*	*2021*	*2022*	*2021*	*2022*
Ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության ուղղություն	1	-	-	1	-	-
Մթնոլորտային օդի պահպանության ուղղություն	-	13	-	-	-	9
Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ուղղություն	-	12	-	-	-	2
Ընդամենը	**1**	**25**	**0**	**1**	**0**	**11**

Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրության խախտումները կամ շեղումները

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում վերհանվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները, մասնավորապես՝

- ՀՀ «Ջրային օրենսգրքի» 21-րդ, 27-րդ հոդվածներ,
- ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ և 110-րդ հոդվածներ,
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 15-րդ հոդվածներ,
- ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 46-րդ, 59-րդ և 65-րդ հոդվածներ,
- Թափոնների մասին ՀՀ օրենք 12-րդ, 13-րդ հոդվածներ,
- ՀՀ Հարկային օրենսգրքի 166-րդ, 167-րդ, 168-րդ, 169-րդ, 170-րդ, 203-րդ, 204-րդ, 205-րդ, 212-րդ հոդվածներ:

Տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումներ			
	2020 թվական	***2021 թվական***	***2022 թվական***
ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք	**32**	**101**	**142**
ՀՀ ջրային օրենսգիրք	**58**	**71**	**58**
ՀՀ հողային օրենսգիրք	**20**	**64**	**69**
ՀՀ հարկային օրենսգիրք	**35**	**140**	**167**
Թափոնների մասին ՀՀ օրենք	**28**	**91**	**128**
Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք	**21**	**93**	**97**
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք	**7**	**24**	**36**
Պաշտոնական վիճակագրության մասին ՀՀ օրենք	**3**	**39**	**53**
Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենք	**1**	**7**	**6**
Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին ՀՀ օրենք	**1**	**0**	**0**
Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք	**2**	**0**	**22**
Լիցենզավորման մասին ՀՀ օրենք	**5**	**11**	**32**
Անտառային օրենսգիրք	**2**	**24**	**15**
Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք	**1**	**14**	**20**
Ընդամենը	**216**	**679**	**845**

Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշմամբ 2022 թվականի ընքացքում իրականացվել է թվով 3435 ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների դասակարգում՝ ըստ ռիսկայնության աստիճանների *(Քարտեզ 1)*՝

բարձր ռիսկայնության՝ 685

միջին ռիսկայնության՝ 1720

ցածր ռիսկայնության՝ 1030

Քարտեզ 1

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից վերահսկման ենթակա 3435 տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը՝ ըստ ՀՀ վարչական տարածքների



Կենսաբազմազանության վերահսկողության ոլորտ

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում ընդհանուր առմամբ արձանագրվել է 897 իրավախախտման դեպք, կիրառվել է 246 վարչական տույժ, նշանակվել է 25,310,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք և հաշվարկվել է բուսական և կենդանական աշխարհին պատճառված վնաս 913,513,844 ՀՀ դրամի չափով:

Բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ուղղություն

Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի հաշվեկշռով անտառային հողերը կազմում են 334.01 հազ. հեկտար, իսկ հատուկ պահպանվող տարածքները 335.47 հազ. հեկտար տարածք:

Հայաստանի Հանրապետությունում անտառների կայուն կառավարումն իրականացվում է Շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 17 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի և ԲՀՊՏ-ների պահպանությունն իրականացնող 6 ՊՈԱԿ-ների միջոցով:

Իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում ընդհանուր առմամբ ՝

- արձանագրվել է 755 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 218 վարչական տույժ,
- նշանակվել է 22,340,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք,
- հայտնաբվերել և արձանագրվել է ապօրինի հատված և մինչև աճի դադարեցման աստիճան վնասված 18,405 հատ ծառ,
- 1231,8 խմ փայտանյութի ապօրինի ձեռքբերում,
- կատարվել է 696 վնասի հաշվարկ, որոնցով բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 893,690,284 ՀՀ դրամ,

Իրականացվել են ստուգումներ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում՝ Ստեփանավանի, Իջևանի և Ճամբարակի անտառտնտեսություն Թումանյանի, Վանաձորի, Ջիլիզայի և բնության հատուկ պահպանվող տարածք՝ Սևան ազգային պարկ, Արփի լիճ ազգային պարկ, Խոսրով պետական արգելոց, Արգելոցապարկային համալիր ՊՈԱԿ-ներում: Կազմվել է 9 ստուգման ակտ, արդյունքում 3 ստուգմամբ

կայացվել է վարչական տույժի 3 որոշում, կիրառվել է 550,000 ՀՀ դրամի չափով տուգանք, իսկ 3 ստուգման նյութերն ուղարկվել է ՀՀ իրավապահ մարմիններին, որոնցով հաշվարկված բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը 3379 ապօրինի հատված ծառի համար կազմել է 155,819,500 ՀՀ դրամ:

Ստուգումներով հայտնաբերված խախտումներ

Հայտնաբերվել են ՀՀ անտառային և Հողային օրենսգրքերի, Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության, Բնության հատուկ պահպանվող տարածքների, Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքների պահանջների խախտումներ: Մասնավորապես՝

- անտառային հողերում ապօրինի հատվել են ծառեր
- չեն իրականացվել անտառների պետական հաշվառում
- անտառի սեփականատիրոջ պարտականություններն իրականացվել են ոչ պատշաճ
- հիմնականում անտառաշինական նախագծերը հաստատված չեն
- խախտվել է բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմը,
- չեն ապահովել անտառօգտագործման, անտառավերականգնման և անտառապատման կարգը,
- խախտվել է արգելքը բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտում տնտեսական գործունեության առնչությամբ,
- իրականացվել է կառուցապատում առանց սահմանված նախագծերի համաձայնեցման և շրջակա միջավայրի ազդեցության դրական փորձաքննության և շինարարության թույլտվության:

Տեսչական մարմնի նախաձեռնությամբ և իրավապահ մարմինների գրությունների հիմքով իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում՝

- արձանագրվել է 724 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 215 վարչական տույժ,
- նշանակվել է 21,790,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք

- կատարվել է 690 վնասի հաշվարկ, որոնցով բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 737,870,784 ՀՀ դրամ

2022 թվականի սեպտեմբերի 13-ին ադրբեջանական ագրեսիայով պայմանավորված «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի Ջերմուկի անտառպետության 2-րդ և 4-րդ պահաբաժիններում բռնկված հրդեհի վերաբերյալ, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակներում հայտնաբերված 728 այրված ծառի բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 35,655,000 ՀՀ դրամ: Գործի հետագա ընթացքն ապահովելու նպատակով նյութերն ուղարկվել են ՀՀ իրավապահ մարմիններին:

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն.

Տեսչական մարմնի ձևավորումից հետո սույն ուղղությունում իրականացված հետևողական վերահսկողության արդյունքներով կայուն բարձր ռիսկային և նախորդ տարիների կտրվածքով երկարաժամկետ բնույթ են կրում համատարած ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման վերաբերյալ հիմնախնդիրները: Նախորդ երկու տարիների իրավիճակն արտացոլող տվյալները ներկայացված են *Աղյուսակ 8-ում*:

Աղյուսակ 8

Ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխում					
Ժամանակահատվածը	***Հատված ծառերի քանակը /հատ/***	***Ձեռքբերված փայտանյութի ծավալը /խմ/***	***Տուգանված անձանց թվաքանակը***	***Վարչական տուգանքի չափը (ՀՀ դրամ)***	***Բնությանը պատճառված վնասի գումարի չափը (ՀՀ դրամ)***
2020 թվական	12,978	1,647	324	33,836,000	814,714,440
2021 թվական	19,475	2,567	272	28,780,000	1,004,640,274
2022 թվական	18,405	1,232	218	22,340,000	893,690,284
Ընդամենը	**50,858**	**5,446**	**814**	**84,956,000**	**2,713,044,998**

Համաձայն այդ տվյալների 2022 թվականի ընթացքում՝

- ապօրինի հատված ծառերի քանակը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 5.5%, իսկ 2020 թվականի համեմատությամբ աճել է՝ 41,8%,
- ապօրինի ձեռքբերված փայտանյութի ծավալը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 52,0%, իսկ 2020 թվականի համեմատությամբ նվազել է՝ 25,2%:

Ապօրինի ծառահատումների քանակային վերլուծությունը ցույց է տալիս, որ հատվող ծառերի քանակի տեսանկյունից առավել խնդրահարույց են ՀՀ Տավուշի, Լոռու, Սյունիքի և Կոտայքի մարզերը *Աղյուսակ 9-ում*:

Աղյուսակ 9

Ապօրինի ծառահատումների քանակը/հատ՝ ըստ խնդրահարույց մարզերի				
Ժամանակահատվածը	***Կոտայքի մարզ***	***Սյունիքի մարզ***	***Տավուշի մարզ***	***Լոռու մարզ***
2020 թվական	282	256	3555	8,013
2021 թվական	4,977	1,699	7435	2,976
2022 թվական	5,554	1,042	4217	5,620
Ընդամենը	**10,813**	**2,997**	**15,207**	**16,609**

Կանխարգելիչ գործողություններ

«Ապօրինի ծառահատումների և ապօրինի ձեռք բերված փայտանյութի տեղափոխման նկատմամբ իրականացվող համատեղ միջոցառումներ» ծրագրի շրջանակում Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, ՀՀ Ոստիկանության, Շրջակա միջավայրի նախարարության, Տավուշի և Գեղարքունիքի մարզպետարանների հետ համատեղ 2022 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2023 թվականի հունվարի 20-ը իրականացվել է ապօրինի ծառահատման, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված փայտանյութի դուրս բերումն ու տեղափոխումը բացառող միջոցառումներ: Մասնավորապես՝

- իրականացվել են բացատրական աշխատանքներ անտառամերձ համայնքների բնակչության հետ,
- տեղակայվել են շուրջօրյա անշարժ պահակակետեր՝ Սևան-Երևան ՃՈ-ում, Դիլիջանի ոլորաններում, Սևան-Վարդենիս՝ Ճամբարակի խաչմերուկում, Գեղամավան–Վարսեր ճանապարհին, Մարտունի–Սելիմի լեռնանցքում և իրականացվել է ուժեղացված վերահսկողություն,
- արդյունքում նշված անշարժ պահակակետերում ստուգվել է 9023 մեքենա, որից 20-ը տեղափոխվել են Ոստիկանության բաժին՝ փայտանյութի ձեռքբերման օրինականությունը պարզելու նպատակով,
- բոլոր մեքենաները և փայտանյութի ձեռք բերման փաստաթղթերը (հաշիվ ապրանքագրեր) գրանցվել են հաշվառման մատյաններում, որի արդյունքում կանխվել է նույն փաստաթղթով կրկնակի տեղափոխման դեպքերը,
- ապօրինի ձեռք բերված փայտանյութի տեղափոխման փաստով 15 անձի նկատմամբ կիրառվել է 1.500.000 ՀՀ դրամ վարչական տուգանք,
- ապօրինի ձեռքբերված փայտանյութի ծավալը կազմել է 28 մ^3, որի վերաբերյալ հաշվարկվել է 1.008.000 ՀՀ դրամ վնաս:

Կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության ուղղություն

Իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում ընդհանուր առմամբ ՝

- արձանագրվել է 142 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 28 վարչական տույժ,
- նշանակվել է 2,970,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք,
- կատարվել է 99 վնասի հաշվարկ, որոնցով կենդանական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը կազմել է 19,823,560 ՀՀ դրամ,
- արձանագրվել է շուրջ 194 վայրի կենդանի ապօրինի որս, որից Կարմիր գրքում գրանցված 6 բեզոարյան այծ, ինչպես նաև 2 աղվես, 8 կաքավ, 4 սև ագռավ, 1 անտառային կաչաղակ, 2 փորսուղ, 156 տափաստանային

արտույտ, 10 թխակապույտ աղավնի, 1 ճուռակ, 1 վայրի խոզ, 1 եղեգնակատվ, 2 նապաստակ,

- առգրավվել է 2,997 կգ ձուկ, 10 կգ ձկնկիթ, 314 ձկնորսական ցանց, 145 խեցգետնորսիչ, 3 նավակ,
- առգրավվել է 13 զենք, որոնց բռնագրավելու պահանջով 13 հայցադիմումից 11-ն ընդունվել է վարույթ, 1-ը՝ 2023 թվականին, 3-ը՝ բավարարվել է, 9-ն ընթացքի մեջ է:

Իրականացվել են ստուգումներ Հրաշք-Այգի ՍՊԸ, Ֆաունա ԶՕՕ ՍՊԸ, Կենդանաբուսաբանական այգի-վայրի կենդանիների փրկության կենտրոն ՀԿ և Երևանի կենդանաբանական այգի ՀՈԱԿ տնտեսավարող կազմակերպությունների մոտ: Կազվել է 4 ստուգման ակտ և տրվել է պատադիր կատարման հանձնարարական:

Մինչև 2022 թվականը, ստուգաթերթի բացակայությամբ պայմանավորված, սույն ուղղությամբ ստուգումներ չեն իրականացվել: ՀՀ կառավարության որոշմամբ 2021 թվականին համապատասխան ստուգաթերթի հաստատումից հետո 2022 թվականին իրականացվել են ստուգումներ:

Ստուգումներով հայտնաբերված խախտումներ

Հայտնաբերվել են Կենդանական աշխարհի, Որսի և որսորդական տնտեսության վարման մասին ՀՀ օրենքների պահանջների խախտումներ: Մասնավորապես՝

- չեն իրականացվել անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների համարակալում և նույնականացում՝ հաշվի առնելով դրանց տեսակային առանձնահատկությունները,
- իրականացվել են վայրի կենդանիների արտահանում, ներմուծում ու դրանց պահում անազատ պայմաններում կամ վերաբնակեցում ազատ պայմաններում առանց լիազորված մարմնի թույլտվության,

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն Տեսչական մարմնի ձևավորումից հետո սույն ուղղությունում իրականացված հետևողական վերահսկողության արդյունքներով բարձր ռիսկային են ապօրինի որսի և սիգի ձվադրման ժամանակահատվածի հետ

կապված ձկնորսության խնդիրները: Նախորդ տարիների իրավիճակներն արտացոլող տվյալները ներկայացված են *Աղյուսակ 10-ում*:

Աղյուսակ 10

Առգրավված վայրի կենդանիների և ձկան քանակը							
Ժամանակահատվածը	*Հայտնաբերված և առգրավված վայրի կենդանիների քանակը /հատ/*	*Հայտնաբերված և առգրավված ձկան քանակը /կգ/*		*Վարչական տույժերի քանակը*	*Վարչական տուգանքի չափը (ՀՀ դրամ)*	*Բնությանը պատճառված վնասի գումարի չափը (ՀՀ դրամ)*	
		*Հատուկ գործողություն**	*Տարեկան վերահսկողությամբ*			*Հատուկ գործողություն**	*Տարեկան վերահսկողությամբ*
2020 թվական	68	126,516	3,170	36	2,300,000	632,580,000	9,276,340
2021 թվական	115	0	689	45	4,100,000	0	11,705,590
2022 թվական	194	0	2,997	27	2,920,000	0	19,823,560
Ընդամենը	**377**	**126,516**	**6,856**	**108**	**9,320,000**	**632,580,000**	**40,805,490**

*2020 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների հետ համատեղ իրականացված հատուկ գործողությունների արդյունքում հայտնաբերվել են հանցագործության հատկանիշներով առանձնապես խոշոր չափերի բնապահպանական օրենսդրության խախտման 6 դեպք, որոնց առնչությամբ հաշվարկվել է 632 580 000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս (126,516 կգ սիգ):

Համաձայն այդ տվյալների 2022 թվականի ընթացքում՝

- ապօրինի որսված կենդանիների քանակը 2021 թվականի համեմատությամբ աճել է 68,7%, իսկ 2020 թվականի համեմատությամբ աճել է՝ 185,3%,
- ապօրինի որսված ձկան քանակը 2021 թվականի համեմատությամբ աճել է 335,0%, իսկ 2020 թվականի համեմատությամբ նվազել է՝ 5,5%:

Կանխարգելիչ գործողություններ

«Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումներ» ծրագրի շրջանակում Տեսչական մարմինը, Ոստիկանության, Շրջակա միջավայրի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, Գեղարքունիքի մարզպետարանի, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ,

սիգի ձվադրման ժամանակահատվածով պայմանավորված, 2022թ. դեկտեմբերի 15-ից մինչև 2023թ. հունվարի 20-ը վերահսկողության ուժեղացված միջոցառումներ են իրականացրել Սևանա լճում և Հայաստանի ողջ տարածքում: Վերահսկողական միջոցառումների շրջանակներում պատասխանատու գերատեսչությունների ներկայացուցիչները համատեղ իրականացրել են հանդիպումներ Սևանա լճի հարակից բնակավայրերի ղեկավարների, ձկնորսների և քաղաքացիների հետ: Բացատրական աշխատանքներ են տարվել միջոցառման նպատակի վերաբերյալ, որն է՝ արգելել Սևանա լճում սիգի որսը՝ ձկնատեսակի ձվադրման ժամանակահատվածով պայմանավորված: Այս համատեքստում՝

- «Սևան» ազգային պարկի տարածքից դուրս են բերվել 3 նավակ (կիրառվել է վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում և տուգանք վարչական տույժերը), որսագործիքներ և ձկնորսների ժամանակավոր կացարաններ:
- Խստացված վերահսկողություն է իրականացվել Սևանա լճում և լիճը գոտևորող մայրուղիներում:
- Տեղադրվել են հսկիչ կետեր Սևանի ճանապարհային ոստիկանության, Գեղամավան – Վարսեր, Սևան – Ճամբարակ – Վարդենիս, Մարտունի – Սելիմ – Աղնջաձոր և Դիլիջանի ոլորանների հենակետերում:
- Երևան քաղաքի ձկան վաճառակետերում և մարզերի շուկաներում իրականացվել է խիստ վերահսկողություն:
- Հենակետերում և շուկաներում առգրավվել է ընդհանուր առմամբ 1145,3 կգ սիգ տեսակի թարմ ձուկ, 10 կգ ձկնկիթ, 174 ձկնորսական ցանց, 95 խեցգետնորսիչ և 3 նավակ:
- Առգրավված ձկան ամբողջ քանակությունը հանձնվել է տուն-ինտերնատներին, մանկատներին, գիշերօթիկ դպրոցներին, հոգեբուժարաններին և զորամասերին:

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

- Ապօրինի մթերված փայտանյութի տեղափոխման դեմ իրականացված վերահսկողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են ֆիզիկական անձանց, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից անտառօգտագործման և փայտանյութի տեղափոխման խախտումներ:

  Վերոնշյալ խախտումները բացառելու և անտառօգտագործման և փայտանյութի տեղափոխման գործողություններն առավել արդյունավետ դարձնելու նպատակով լիազոր մարմնին ներկայացվել է առաջարկություն՝ կապված անտառօգտագործման գործընթացը կարգավորող օրենսդրական և այլ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ իրականացնելու հետ, որով անտառօգտագործման իրավունքը կվերապահվի բացառապես լիազոր մարմնին և կբացառվի այլ անձանց (ֆիզիկական անձ, ԱՁ, ՍՊԸ) տրամադրված փաստաթղթերով փայտանյութի մթերումը և դուրսբերումը:
- Կենսաբազմազանության վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական բացերի վերհանման նպատակով՝ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ է ներկայացվել առաջարկություններ՝ կապված «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում, «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում, ՀՀ հողային օրենսգրքում, ՀՀ անտառային օրենսգրքում և այլ իրավական ակտերու փոփոխություն և լրացում կատարելու հետ:
- Տեսչական մարմնի կողմից ապօրինի որսի դեմ իրականացված վերահսկողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են դեպքեր, երբ որսաշրջանից դուրս որսորդը զենքով և որսորդական շնով գտնվել է

որսահանդակում, որի բացառումը անհրաժեշտ է ներառել որսի արգելված եղանակների մեջ: Վերջինիս առնչությամբ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ և Շրջակա միջավայրի նախարարություն ներկայացվել են առաջարկություններ՝ «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքում և «Որսի կանոնները հաստատելու մասին» հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Մթնոլորտային օդի, ջրերի, հողերի, վտանգավոր նյութերի և թափոնների գործածության, օգտագործման և պահպանության ուղղություններ

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում ընդհանուր առմամբ արձանագրվել է 992 իրավախախտման դեպք, կիրառվել է 678 վարչական տույժ, նշանակվել է 65,320,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք և հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 354,506,734 ՀՀ դրամի չափով (199,278,261 *ՀՀ դրամի, 18,585,030 ՀՀ դրամի և 174,714 ՀՀ դրամի շրջակա միջավայրին պատճառված վնասները տե՛ս* ***Ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության ոլորտի նկարագրությունում***), *որից ստուգումներով՝*

- արձանագրվել է 647 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 366 վարչական տույժ,
- նշանակվել է 40,310,000 ՀՀ դրամ վարչական տուգանք,
- 99 վնասի հաշվարկով շրջակա միջավայրի վնասը կազմել է 297,480,604 ՀՀ դրամ:

Մթնոլորտային օդի պահպանության ուղղությունով արձանագրվել է՝

- 179 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 154 վարչական տույժ,
- նշանակվել է վարչական տուգանք 13,000,000 ՀՀ դրամի չափով,
- հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված 198,171,172ՀՀ դրամի չափով վնաս,

- 13 տնտեսավարողների մոտ գործողությունները կասեցվել են՝ անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների թույլտվության բացակայության հիմքով, որից 9 կազմակերպություն ձեռք է բերել թույլտվություն, որի հետևանքով կասեցումները հանվել են:

ՀՀ վարչապետի հանձնարարականներ

Ստացվել է թվով 5 հանձնարարական մթնոլորտային օդի պահպանության ոլորտում գործունեություն իրականացնող 23 շինարարական կազմակերպությունում ստուգումների իրականացման վերաբերյալ, արդյունքում 10 տնտեսավարող տուգանվել 1,500,000 ՀՀ դրամի գումարի չափով, իսկ 13 ստուգում տեղափոխվել է 2023 թվական:

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները՝

- առանց սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվության գործունեություն,
- թույլտվության չափաքանակների գերազանցմամբ գործունեություն

Մասնավորապես՝

- Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների, հատկապես անօրգանական փոշու բարձր կոնցենտրացիաների պատճառը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության որոշ տարածքներում՝ մասնավորապես Երևան քաղաքում լայնածավալ շինարարական աշխատանքների իրականացման հետ՝ շինարարական հրապարակներում փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ իրականացնելիս «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի խախտմամբ՝ մասնավորապես շինարարական հրապարակները օրվա ընթացքում պարբերաբար չեն ջրվում, շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը չեն լվացվում, ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային միջոցներով սորուն նյութերի տեղափոխումը կատարվում է առանց փոշու համար անթափանց ծածկոցների:
- Հանքարդյունաբերության ոլորտում խախտումները պայմանավորված են անօրգանական փոշու և այլ նյութերի չափաքանակներից ավել

արտանետումներով, որոնք չունեն, կամ չեն ապահովում մաքրող սարքավորումների անխափան և արդյունավետ աշխատանքը:

- Մետաղական խտանյութի մշակմամբ զբաղվող կազմակերպությունները, հատկապես ֆերոձուլվածքների արտադրությամբ զբաղվողները, հեռացող գազերի մաքրման համակարգի անարդյունավետ աշխատանքի արդյունքում՝ բավարար քանակակությամբ չեզոքացուցիչ չօգտագործելու հետևանքով մթնոլորտ են արտանետել թույլտվության չափաքանակներից ավել ծծմբի երկօքսիդ, կամ մթնոլորտը արտանետումներից մաքրելու սարքավորումների (զտիչների) շահագործման կանոնների խախտմամբ, մասնավորապես չեն պահպանվել սարքավորումների սարքինությունը, որի հետևանքով մթնոլորտ է արտանետվել չափաքանակներից ավել անօրգանական փոշի:
- Ավտոտրանսպորտային միջոցների քանակի ավելացմամբ, ինչպես նաև դրանց տեխնիկական ոչ լիարժեք հագեցվածությամբ պայմանավորված՝ վնասակար նյութերի չեզոքացման համակարգի բացակայության կամ անսարք լինելու պատճառով ավելացել է մթնոլորտում ածխաջրածինների, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի քանակությունը: Չնայած, ՀՀ-ում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը սահմանված է, սակայն առկա է անհրաժեշտություն կատարել օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև կիրառման հետ կապված ընթացակարգային լուծումներ:
- Տնտեսավարող սուբյեկտների կողմից առանց մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների սահմանված նորմատիվների գործունեության իրականացումը բերում է մթնոլորտային օդում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունների բարձրացմանը՝ մթնոլորտային օդի աղտոտվածությանը: Առանց թույլտվության գործունեություն իրականացնելը վկայում է այն մասին, որ տնտեսավարող սուբյեկտը մինչև գործունեություն ծավալելը պետք է ՀՀ օրենսդրությամբ

սահմանված կարգով հաշվառվի լիազոր մարմնի կողմից՝ այսինքն գործունեության հետևանքով առաջացող աղտոտող նյութերի արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված ՕՊՕ-ն (օդի պահանջվող օգտագործումը) մեկ տարում երկու միլիարդ խորանարդ մետր չափանիշը գերազանցելու դեպքում լիազոր մարմնի կողմից ստանում է արտանետման թույլտվություններ: Սակայն իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց պետական հաշվառման կարգը կամ գործընթացը (ընթացակարգը) ներկայումս հստակեցված չէ:

Կանխարգելիչ գործողություններ

- 2022 թվականին Տեսչական մարմնի նախաձեռնությամբ ՀՀ ոստիկանության հետ համատեղ իրականացվել է փոշու արտանետումները նվազեցնելուն ուղղված կանխարգելիչ լայնածավալ գործողություններ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոտրանսպորտային միջոցներով սորուն նյութերի տեղափոխումն առանց փոշու համար անթափանց ծածկոցների դեպքերը բացառելու նպատակով: Արդյունքում հայտնաբերվել 77 իրավախախտման դեպք, կիրառվել է վարչական տուգանք 3,850,000 ՀՀ դրամի չափով և իրականացվել են բացատրական աշխատանքներ:
- ՀՀ-ում խոշոր շինարարություն իրականացնող տնտեսավարողների հետ կազմակերպվել են հանդիպումներ և իրազեկման բացատրական աշխատանքներ՝ մթնոլորտային օդ փոշու արտանետումները նվազեցնելու և/կամ բացառելու ուղղությամբ, այն է՝ շինարարական հրապարակները պարբերաբար ջրել, շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը լվանալ, ավտոտրանսպորտային միջոցներով սորուն նյութերի տեղափոխումը կատարել փոշու համար անթափանց ծածկոցներով:

Վերը նշված իրավախախտումների քանակի և դրանց հետևանքով առաջացող ռիսկերի նվազեցման նպատակով 2023 թվականի կտրվածքով իրականացվելու են շարունակական վերահսկողական միջոցառումներ:

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ քննարկումներ են իրականացվել՝

- ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 91-Ն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ, մասնավորապես հաշվարկներում կիրառվող ակտիվ աղտոտման գոտու շրջապատի բնութագիրն արտահայտող գործակիցի վերաբերյալ:
- ՀՀ կառավարության 1999 թվականի «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ կապված մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների հաշվառման ենթակա կազմակերպություններին հաշվառելու ընթացակարգի հստակեցման մասով,

Տեսչական մարմինների համակարգման գրասենյակ է ներկայացվել առաջարկ՝

- ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2410-Ն «Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը հաստատելու մասին» որոշման կարգում փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ:
- ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասով, մասնավորապես պետական հաշվառման ենթակա կազմակերպությունների վերաբերյալ:

Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ուղղությունով արձանագրվել է՝

- 99 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 80 վարչական տույժ,
- նշանակվել է վարչական տուգանք 22,230,000 ՀՀ դրամի չափով,
- հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված 94,974,272 ՀՀ դրամի չափով վնաս,
- ստուգումների արդյունքում ապօրինի ջրառ իրականացնելու հետևանքով 12 տնտեսավարողի մոտ կասեցվել է գործողությունը, որից 2-ի կասեցումը, սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո հանվել է:

ՀՀ վարչապետի հանձնարարականներ

Ստացվել է թվով 5 հանձնարարական ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտում գործունեություն իրականացնող 19 կազմակերպությունում (ՓՀԷԿ) ստուգումների իրականացման վերաբերյալ, արդյունքում 8 տնտեսավարող ենթարկվել է վարչական տույժի 1,200,000 ՀՀ դրամի գումարի չափով, 11 տնտեսավարողի տրվել է խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք, 3 տնտեսավարողի նկատմամբ հաշվարկվել է 32,227,460 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնաս: Մեկ տնտեսվարողի մոտ արձանագրվել է ՇՄԱԳ դրական եզրակացության բացակայություն, վերջինիս գործողությունը կասեցվել է: Հետագայում վարչական իրավախախտման գործի քննության արդյունքում կասեցումը հանվել է:

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները՝

- առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման իրականացում
- ջրօգտագործման թույլտվության պայմանների կամ պահանջների խախտում

Ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների մոտ արձանագրված խախտումներն են՝

- ջրօգտագործման թույլտվության չափաքանակների գերազանցում,
- հեռացվող կեղտաջրերի մաքրման բացակայություն,
- ոչ սահմանված վայրեր կեղտաջրերի հեռացում,
- ջրաչափական սարքերի բացակայությունը կամ չկապարակնքում:

ՀԷԿ և ՓՀԷԿ-երում արձանագրված խախտումներն են՝

- գետերում էկոլոգիական թողքերի չապահովում,
- ջրօգտագործման թույլտվության չափաքանակների գերազանցում
- ձկնապաշտպան և ձկնանցարան կառույցների բացակայություն կամ սահմանված ձևի և չափերի չապահովում,
- Առցանց ջրաչափ հաշվիչ սարքերի բացակայություն:

Արտադրության ոլորտում արձանագրված խախտումներն են՝

- Ձեռնարկությունների կողմից առաջացած կեղտաջրերը բաց ջրավազաններ կամ սեպտիկ հորատանցքեր (անջրաթափանց) արտանետելու ժամանակ նախնական մաքրման աշխատանքներ չիրականացում:

Կանխարգելիչ գործողություններ.

- Իրականացվել են օրենսդրական դաշտին առընչվող բացատրական աշխատանքներ, պարզաբանումներ՝ հատկապես մակերևույթային և ստորգետնյա ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման բնագավառում:

Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոնների ուղղությունում արձանագրվել է՝

- 281 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 87 վարչական տույժ,
- նշանակվել է վարչական տուգանք 4,700,000 ՀՀ դրամի չափով,

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրվել է, որ թափոնների և վտանգավոր նյութերի գործածության օրենսդրական խնդիրներ առկա են վերահսկվող բոլոր ոլորտներում:

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները՝

- թափոնների անձնագրավորման բացակայություն, ինչը թափոնների կառավարման ոլորտի հիմնադրույթներից է, քանի որ թափոնների անձագրավորմամբ է սահմանվում, թափոնների առաջացման աղբյուրները, վտանգավորության աստիճանը, ոչնչացման եղանակը,
- թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման բացակայությունը, որը իրականացվում է պետության կողմից տեղեկատվության հավաքման, մշակման, պահպանման և վերլուծության ապահովման նպատակով,
- գոյացող, օգտագործվող, վնասազերծվող, այլ անձանց փոխանցվող կամ այլ անձանցից ստացվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառման բացակայություն,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների աղավաղումներով ներկայացում,
- վտանգավոր թափոնների գործածության լիցենզիայի բացակայություն, ինչը թափոնների գործածության ոլորտի հիմնադրույթներից է, քանի որ նպատակ է հետապնդում նվազեցնել մարդու առողջությանը և շրջակա միջավայրին հասցվող վնասը,
- թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի բացակայություն, ինչի առկայությունը

նպատակ է հետապնդում կառավարելու թափոնների առաջացումը և շարժը, պահպանելու մարդու առողջությունը և շրջակա միջավայրը:

Թափոնների և վտանգավոր նյութերի գործածության ոլորտի վերահսկողության արդյունքներով հիմնական խնդիրներն են՝

- Հանրապետությունում գործող թափոնակուտակիչները և աղբավայրերը հիմնականում գրանցված են Շրջակա միջավայրի նախարարությունում վարվող թափոնների հեռացման վայրերի ռեեստրում, բայց չեն անցել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և չունեն վտանգավոր թափոնների գործածության լիցենզիա, ինչի հետևանքով բնապահպանական տեսանկյունից նրանց աշխատանքը կանգավորված չէ, բացակայում է նրանց բնապահպանական կառավարման պլանները: Այս հանգամանքով է պայմանավորված շրջակա միջավայրի աղտոտման այնպիսի ռիսկերը, ինչպիսիք են նախորդ տարիներին արագիլների աղտոտումը:
- Հիմնական խնդիրներից է նաև արտադրական ձեռնարկություններում թափոնների գոյացման նորմատիվների և տեղադրման սահմանաքանակների նախագծերի, թափոնների անձնագրերի բացակայությունը: Նույն խնդիրները արձանագրվել են նաև շինարարության, ընդերքօգտագործման, բժշկական և սպասարկման ոլորտների կազմակերպություններում:
- Ներկայումս, կապված Հայաստանի Հանրապետությունում տնտեսության աճի տեմպերի, թափոն առաջացնողների թվաքանակի աճի հետ, բարձր է թափոնների գործածության ոլորտի ռիսկերը, ավելի արդիական է դառնում թափոնների կառավարման համակարգի, այդ թվում վերահսկողության ոլորտի արդյունավետության ավելացումը:

Հողերի օգտագործում և պահպանություն ուղղությունով արձանագրվել է՝

- 108 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 63 վարչական տույժ,

- նշանակվել է վարչական տուգանք 5,360,000 ՀՀ դրամի չափով,
- հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված 61,361,290 ՀՀ դրամի չափով վնաս:

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները՝

- Հողի բերրի շերտիի ապօրինի տեղափոխում, որը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ հաստատված հողի բերրի շերտի օգտագործման կարգի պահանջների չկատարման, տնտեսվարողների կողմից հատկացված հողամասերում հողի բերրի շերտի պահպանման կանոնների խախտման հետ:
- Հողի բերրի շերտի դեգրադացիա, աղբոտում, աղտոտում, որոնք հայտնաբերվել են ընդերքօգտագործման ոլորտի տնտեսավարողների մոտ և չեն իրականացվել հողի բերրի շերտի հանման և պահպանման պարտավորությունները:

Կանխարգելիչ գործողություններ.

Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզերի ճանապարհներին իրականացված վերահսկողական գործողությունների արդյունքում արձանագրվել են հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման 20 դեպք: Արդյունքում նշանակվել է վարչական տուգանք 2,240,000 դրամի չափով և հաշվարկվել է 3,080,303 ՀՀ դրամի շրջակա միջավայրին պատճառված վնաս: Իրավախախտումների կանխարգելման նպատակով նախատեսվում է 2023 թվականի ընթացքում իրականացվելու են շարունակական վերահսկողական միջոցառումներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ուղղությունով արձանագրվել է՝

- 46 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 40 վարչական տույժ,
- նշանակվել է վարչական տուգանք 3,520,000 ՀՀ դրամի չափով:

- 2 տնտեսավարողի մոտ ՇՄԱԳ դրական եզրակացության բացակայության հիմքով գործողությունը կասեցվել է, որից 1-ի կասեցումը հանվել է:

Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարներ և վիճակագրական հաշվետվություններ ուղղություններով արձանագրվել է՝

- 279 իրավախախտման դեպք,
- կիրառվել է 253 վարչական տույժ,
- նշանակվել է վարչական տուգանք 16,360,000 ՀՀ դրամի չափով:

Իրականացվել են 2021 թվականի համար Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից Տեսչական մարմին ներկայացրած վարչական վիճակագրական հաշվետվությունների ընդունման և ամփոփում: Մասնավորապես՝

- Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին Ձև 2 տա-օդ՝ 1262 հաշվետվություն, (2019 թվականի համար՝ 1254 հաշվետվություն, 2020 թվականի համար՝ 1254 հաշվետվություն),
- Ջրօգտագործման մասին Ձև 2 տա-ջուր՝ 1020 հաշվետվություն, (2019 թվականի համար՝ 747 հաշվետվություն, 2020 թվականի համար՝ 884 հաշվետվություն),
- Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին Ձև 1-թափոն՝ 1371 հաշվետվություն (2019 թվականի համար՝ 1371 հաշվետվություն, 2020 թվականի համար՝ 1350 հաշվետվություն):

Ընդամենը՝ 2021 թվականի համար՝ **3653** հաշվետվություն:

Ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության ոլորտ

Հայաստանի Հանրապետությունում **մետաղական օգտակար հանածոների արդյունահանման** նպատակով գործում է լիազոր մարմնի կողմից տրամադրված թվով 22 ընդերքօգտագործման իրավունք՝

Սյունիքի մարզ՝ 9,

Լոռու մարզ՝ 6,

Վայոց ձորի մարզ՝ 3,

Կոտայքի մարզ՝ 2,

Գեղարքունիքի մարզ՝ 1,

Արագածոտնի մարզ՝ 1:

Ինչպես նաև **մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության** համար գործում է լիազոր մարմնի կողմից տրամադրված թվով 7 իրավունք՝

Սյունիքի մարզ՝ 4,

Արագածոտնի մարզ՝ 1,

Վայոց ձորի մարզ՝ 1,

Տավուշի մարզ՝ 1:

Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով գործում է լիազոր մարմնի կողմից տրամադրված թվով 386 ընդերքօգտագործման իրավունք: Ստորև ներկայացվում է բաշխվածությունն ըստ մարզերի՝

Հ/Հ	Մարզի անվանումը	Թույլտվությունների քանակը
1.	Երևան	21
2.	Տավուշ	18
3.	Լոռի	37
4.	Շիրակ	52
5.	Գեղարքունիք	25
6.	Արագածոտն	57
7.	Սյունիք	31
8.	Վայոց Ձոր	16
9.	Կոտայք	55
10.	Արմավիր	30
11.	Արարատ	44

Լիազոր մարմնի կողմից տրամադրվել է **ոչ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման** նպատակով գործում է երկրաբանական ուսումնասիրության թվով 36 իրավունք:

Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով գործում է լիազոր մարմնի կողմից տրամադված թվով 34 իրավունք:

Նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար գործում է լիազոր մարմնի կողմից տրամադրված թվով 3 արտոնագիր:

Ընդհանուր վերահսկողական արդյունքներ.

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում ընդհանուր առմամբ արձանագրվել է՝

- արձանագրվել է 487 իրավախախտման դեպք, որից 41 վարչական վարույթով,
- կայացվել է 221 վարչական տույժի որոշում, որից 18 վարչական վարույթով,
- նշանակվել է 21,670,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, որից 1,380,000 ՀՀ դրամը վարչական վարույթով,
- հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 217,863,291 ՀՀ դրամի չափով, որից 18,585,030 ՀՀ դրամը մարկշեյդերական չափագրմամբ,
- պետությանը պատճառված վնաս՝ 961,178,695 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Ստուգումների արդյունքներ

2022 թվականի ընթացքում իրականացվել 92 ընկերությունում, որից 81-ում ավարտվել են, 8-ը գտնվում է ընթացքում, իսկ 3 ընկերությունում հանձնարարագրերն ուժը կորցրած են ճանաչվել:

Ընդհանուր ստուգումների արդյունքում՝

- արձանագրվել է 446 իրավախախտման դեպք,
- կայացվել է 203 վարչական տույժի որոշում,
- կիրառվել է 20,290,000 ՀՀ դրամ վարչական տուգանք,
- հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ 199,278,261 ՀՀ դրամի չափով,

- պետությանը պատճառված վնաս՝ 961,178,695 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Հանքային ջրերի և երկրաբանական ուսումնասիրությունների վերահսկողության ուղղությամբ իրականացվել է 26 ստուգում, որից 4-ը տարեկան ծրագրով՝ ավարտվել են և 22 արտաժրագրային ստուգումից *(2 վերսկսուգում)*՝ 18-ը՝ ավարտվել է, իսկ 3-ը գտնվում է ընթացքի մեջ, 1 հանձնարարագիրն ուժը կորցրած է ճանաչվել:

Ավարտված 22 ստուգման արդյունքում կազմվել է 21 ստուգման ակտ և 1 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու 2 հանձնարարական.

- արձանագրվել է 64 իրավախախտման դեպք,
- կայացվել է 37 վարչական տույժի որոշում,
- կիրառվել է 3,510,000 ՀՀ դրամ վարչական տուգանք,
- հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ 3,592,373 ՀՀ դրամի չափով:

26 ստուգումից՝ 13-ի հիմք է հանդիսացել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությունները, կապված՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.5-րդ մասի համաձայն առաջնային երկրաբանական փաստագրման նյութերի և փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատմանի, ինչպես նաև դրանց արժանահավատության հավաստումների հետ:

Տնտեսավարող սյուբեկտների գրությունների հիմքով Պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ համատեղ իրականացվել են 7 կապարակնիքի պոկման և վերակապարակնքման աշխատանքներ:

Ընդերքի շահագործման վերահսկողության ուղղությամբ իրականացվել է 66 ստուգում, որից 24-ը տարեկան ծրագրով՝ 22-ն ավարտվել է, 1–ը գտնվում է ընթացքի մեջ է, 1-ը հանձնարարագիրն ուժը կորցրած է ճանաչվել, իսկ 42 արտաժրագրային ստուգումից *(4 վերսկսուգում)*՝ 37-ը՝ ավարտվել է, իսկ 4-ը գտնվում է ընթացքի մեջ, 1 հանձնարարագիրն ուժը կորցրած է ճանաչվել:

Ավարտված 59 ստուգման արդյունքում կազմվել է 56 ստուգման ակտ և 3 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու 36 հանձնարարական:.

- արձանագրվել է 382 իրավախախտման դեպք,
- կայացվել է 166 վարչական տույժի որոշում,
- կիրառվել է 16,780,000 ՀՀ դրամ վարչական տուգանք,
- հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 195,685,888 ՀՀ դրամի չափով,
- պետությանը պատճառված վնաս՝ 961,178,695 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից):

1 տնտեսավարողի մոտ ՇՄԱԳ դրական եզրակացության, անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների թույլտվության և սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության բացակայության հիմքերով գործունեությունը կասեցվել է:

Հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի վերաբերյալ

Հայտնաբերվել է ապօրինի ընդերքօգտագործման 41 դեպք,

- 15-ը՝ ստուգման արդյունքում
- 26-ը՝ վարչական վարույթով

Վերը նշված 41 դեպքով իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել է թվով 15 ընդերքօգտագործման ապօրինի դեպք, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 243,349.44մ^3: Ստորև ներկայացվում է վերը նշված ծավալի բացվածքը ըստ օգտակար հանածոյի.

h/h	Գումարային ծավալ մ³	Ծավալ մ³	Հանածոյի տեսակ
1	16,721.1	9,096.0	ավազակոպճային խառնուրդ
2		5,120.7	
3		2,504.4	
4	7,564.8	7,564.8	բենտոնիտային կավ
5	84,850.0	84,850.0	գիպսատար ապար
6	11,676.0	11,676.0	բազալտ
7	89,961.74	3,862.0	տուֆ
8		59,082.4	
9		1,145.6	
10		25,871.7	
11	7,511.0	7,511.0	քվարցիտ
12	18,410.0	18,410.0	ոսկի, արծաթ պարունակող հանքաքար
13	3,562.8	3,562.8	մոնցոնիտ
14	1,798.0	1,798.0	հրաբխային խարամ
15	1,294.0	1,294.0	աղեզիտատրախիտ
Ընդ	**243,349.44**		

Ընդերքի վերահսկողության ոլորտում Իրավապահ մարմինների և Տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների գրությունների հիմքով նաև իրականացվել են 44 մարկշեյդերական չափագրում, որի արդյունքում 26 դեպքով հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված վնաս՝ 18,585,030 ՀՀ դրամի չափով:

2022 թվականի ընդացքում հանքարդյունաբերության ոլորտում հայտնաբերված ապօրինի դեպքերը ըստ մարզերի



Համաձայն Պետական եկամուտների կողմից ստացված տեղեկատվության՝ վերը նշված 15 դեպքից միայն 6-ով պետությանը պատճառված վնասը հաշվարկվել է 961,178,695 ՀՀ դրամ: Մնացած դեպքերով դեռևս պետությանը պատճառված վնասի հաշվարկ չի իրականացվել:

Չափագրման արդյունքում ապօրինի ընդերքօգտագործման 25 դեպքով հայտնաբերված ծավալները հետևյալն են.

h/h	**Հանածոյի տեսակ**	**Ծավալ մ³**
1.	Ավազակոպճային լեռնային զանգված	127,507.0
2.	Տրավերտինի օգտակար հանածո	5,897.0
3.	Հողագրունտ	11,876.0
4.	Սևահող	2,202.0
5.	Հրաբխային խարամ	16,352.0
6.	Պեռլիտանման լեռնային զանգված	413.0
7.	Բազալտանման լեռնային զանգված	18,336.0
Ընդ		**182,583.0**

Ապօրինի ընդերքօգտագործման 1 դեպքով դեռևս չափագրում չի իրականացվել:

Ապօրինի ընդերքօգտագործման դեպքերը հայտնաբերվել են Երևան քաղաքում, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում:

Ապօրինի ընդերքօգտագործման բոլոր դեպքերով նյութերն ուղարկվել են իրավապահ մարմիններին՝ օրենքով սահմանված հետագա ընթացքն ապահովելու համար:

Արաքսի ավազանում իրականացված ստուգումների վերաբերյալ

Արաքս գետի ավազանում ստուգումներ են իրականացվել ընդերքօգտագործման իրավունք ունեցող «ՄԼ Մայնինգ», «Արևայուզի», «Վինեկա», ՍՊ ընկերություններում:

Վերը նշված 3 ընկերությունում իրականացված ստուգումների արդյունքում ընկերությունների պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ 350,000 ՀՀ դրամի չափով: Երեք դեպքով կազմվել է հողային ռեսուրսների վրա

տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման վնասի հաշվարկ՝ 174,714 ՀՀ դրամի չափով:

Երեք դեպքով ստուգման արդյունքում հաստատվել է ապօրինի արդյունահանման դեպքեր: Վերը նշված ապօրինի արդյունահանման դեպքերով նյութերն ուղարկվել են իրավապահ մարմիններին՝ օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

Հ/Հ	**Ընկերությունների անվանում**	**Վարչական տույժ** *ՀՀ դրամ*	**Հաշվարկված վնաս** *ՀՀ դրամ*
1.	«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ	100,000	169,047
2.	«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ		793
3.	«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ	Տեղեկանք	
4.	«Վինեկա» ՍՊԸ	150,000	
5.	Արևսյուզի	100,000	4,874
6.	«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ	ուսումնասիրություն	

Հաճախ հանդիպող խախտումները

Իրականացված վերահսկողական գործողությունների արդյունքում հաճախ արձանագվել է «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 6-րդ կետերի խախտումներ, մասնավորապես՝

- ընկերությունների կողմից չեն վարվում երկրաբանական, մարկշեյդերական քարտեզագրում, ամենօրյա շարժի գրանցամատյան և այլ փաստագրություններ: Երկրաբանական և մարկշեյդերական քարտեզագրումը (երկրաբանական քարտեզներ՝ երկրակեղևի որևէ տեղամասի երկրաբանական կառուցվածքը արտահայտող գծագրեր, մարկշեյդերական գործ՝ հանքափորվածքներում կատարված տարածական-երկրաչափական չափումների տվյալները՝ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ժամանակ ու դրանց փաստաթղթավորումը) ունեն առանցքային նշանակություն հանքարդյունաբերության գործընթացում, որի բացակայությունը

հանգեցնում է նրան, որ ընկերությունների կողմից ընդերքօգտագործման հետ կապված գործունեությունը ծավալվում է լեռնահատկացման ակտով և օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությամբ տրամադրված ընդերքի սահմաններից դուրս և չեն ապահովվում օգտակար հանածոների պաշարների շարժի հավաստի հաշվառում:

- Հաճախ հանդիպող խախտումներից է նաև այն, որ ընկերությունների կողմից ընդերքօգտագործման աշխատանքները չեն իրականացնում օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ չեն պահպանվում նախագծով սահմանված հանքաստիճանի և հանքախորշի բարձրությունը, լայնությունը, խորությունը և երկարությունը, ինչը հանգեցնում է հանքավայրերի ոչ ճիշտ շահագործմանը:
- Ընկերությունների կողմից ընդերքօգտագործման հետ կապված գործունեությունն իրականացվում է առանց հողատարածքի օգտագործման պայմանագրի և/կամ առանց հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու:
- Տարածված խախտումներից են հանդիսանում համայնքներում ավագանու որոշմամբ տնտեսվարողներին տրամադրվող՝ առանց ընդերքօգտագործման իրավունքի առկայության, համայնքային հողամասերի սահմաններում պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման, քարհավաքման և սելաֆատարերի մաքրման աշխատանքների թույլտվությունը, առանց լիազոր մարմնին տեղյակ պահելու: Տեսչական մարմնի կողմից հայտնաբերվել է նման 5 դեպք: Նշված դեպքերում անհրաժեշտ է խստագույնս առաջնորդվել Կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում ընդերքօգտագործման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի թիվ

1932-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 152-Ն որոշման պահանջները:

- Տարածված խնդիրներից է հանդիսանում նաև կոորդինատների անճշտության հարցը, մասնավորապես՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությամբ տրամադրված կոորդինատները չեն համապատասխանում պաշարների հաշվարկմանը կից երկրաբանական քարտեզներով նշված տեղամասերի հետ (շեղումները երբեմն կազմում են տասնյակ կիլոմետրեր):

Մետաղական հանքավայրերի վերահսկողություն.

Վերահսկողական գործընթացները մետաղական հանքավայրերում առավել արդյունավետ դարձնելու նպատակով հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության նախագծում շրջանառության է դրվել Տեսչական մարմնի կողմից առաջարկված փոփոխությունը:

Հանքավայրերի վերահսկում

- Արդունահանման որակի ապահովում և հանքաքարի որակի վերահսկում:
- Տվյալների մշակման, վերլուծության և մոդելավորման ծրագրային ավտոմատացում:

Որակի վերահսկողական գործընթացները և կառավարման համակարգերը կարևոր նշանակություն ունեն հանքարդյունաբերության արտադրողականության համար, քանի որ արտադրանքի որակի նույնիսկ 1% տարբերությունը կարող է մեծ փոփոխությունների հանգեցնել կորզվող մետաղների վերջնական որակի և ծավալների վրա:

Սա գործընթաց է, որը պահանջում է իրական ժամանակում տվյալների հավաքագրում: Սա շատ կարևոր է որակի կորուստը նվազագույնի հասցնելու համար: Իրական ժամանակի տվյալների հավաքագրումը նշանակում է, որ Տեսչական մարմինը նաև տեղյակ կլինի իրական ժամանակում որակի անկման մասին: Տվյալների հոսքերը և գործընթացների ավտոմատացումը որակի վերահսկողությունը դարձնում են ակտիվ, շարունակական գործընթաց: Հավաքված բոլոր արդյունքները միավորելով

կենտրոնացված տվյալների բազայում, հետագայում հավաքագրված տվյալների հիման վրա ստեղծվում է հանքավայրի Grid QA/QC և 3 D մոդուլները:

Ի վերջո, ճշգրիտ վերահսկողական գործընթացը նվազագույնի կհասցնի կողմնակալ կամ չներկայացված մետաղների թաքցնելու հնարավորությունները:

Այսպիսով, արդյունքում Տեսչական մարմինը նշված համակարգի և դրոնների միջոցով ունենալու է հնարավորություն լիարժեք վերահսկել մետաղական հանքավայրերի շահագործումն իրական ժամանակում:

Լաբորատոր հետազոտություններ

Լաբորատոր հետազոտություններ են իրականացվել է 34 տնտեսավարողի մոտ՝ ջրի 38 նմուշի՝ 479 անալիզ, մթնոլորտ արտանետվող գազային միացություններում վնասակար նյութերի 49 չափագրում, հողի 9 նմուշի՝ 36 անալիզ, որից 24 տնտեսավարողի մոտ իրականացված ստուգումների մասնակցության արդյունքում կատարվել է արտահոսքի ջրերի նմուշառում և մթնոլորտ արտանետումների չափագրումներ:

- Որակական և քանակական անալիտիկ հետազոտություններ են իրականացվել արտահոսքերի և մակերևութային ջրերում, որի արդյունքում պարզվել է, որ՝

  հանքարդյունաբերական հոսքաջրերը հիմնականում աղտոտված էին ծանր մետաղներով՝ քրոմ, երկաթ, պղինձ, մոլիբդեն և կախյալ մասնիկներով, որոնց մեծ քանակությունները հիմք էին հանդիսացել շրջակա միջավայրին պատճառած վնասի հաշվարկի,

  կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում էին ամոնիում և նիտրիտ իոններ, լվացող միջոցներ, որոնք կենսաբանական մաքրման կայանների բացակայության պատճառով աղտոտում էին մակերևութային ջրերը և վտանգ հանդիսանում ջրային կենսաբազմազանության համար:
- Որոշված 479 պարամետրերից 47-ը գերազանցել են սահմանային թույլատելի արտահոսքը մինչև 5 անգամ, 57 պարամետր գերազանցել է սահմանային թույլատելի արտահոսքը 5-ից ավել անգամ:

- Մթնոլորտային օդ արտանետվող գազային միացությունների և փոշու չափագրումներ արդյունքում պարզվել է, որ՝
  բնապահպանական տեսանկյունից վտանգ էին ներկայացնում ոչ մետաղական հանքավայրերի շահագործումը. որոնց ջարդիչ կայանքներից, տեսակավորման հոսքագծերից արտանետված անօրգանական փոշու արտանետումները գերազանցում էին սահմանային թույլատրելի արտանետումները՝ վնաս հասցնելով մոտակա պտղատու այգիներին, բնակավայրերին:
- Կատարվել է մթնոլորտ արտանետումների 49 չափագրում, որից 19-ը փոշի, 30-ը՝ գազային միացություններ: Փոշու արտանետումները գերազանցել էին սահմանային թույլատրելի արտանետումները մինչև 5 անգամ 6 տնտեսավարողների մոտ:
- Անալիտիկ հետազոտություններ են իրականացվել ծառերի բնահողերից և ապօրինի տեղափոխված հողերից վերցրած նմուշներում՝ պարզելու հողի բերրիությունը:

Կատարված հետազոտությունները՝ ըստ 2020-2022 թվականների համեմատականի

Տարի			2020	2021	2022
			1	2	3
Մթնոլորտային օդի	**քանակը**		**30**	**68**	**49**
	ՍԹԱ չափաքանակնեը գերազանցել է	մինչև 5 անգամ	3	6	6
		5 և ավել անգամ	3	12	0
Ջրի	**քանակը**		**642**	**1010**	**479**
	ԹՍԱ չափաքանակները գերազանցել է	մինչև 5 անգամ	103	34	47
		5 և ավել անգամ	69	27	57
Հողի	**քանակը**		**66**	**47**	**36**
	վնասակար նյութերի պարունակությունը գերազանցել է ՍԹԿ		2	0	0

Լաբորատոր հագեցվածության ապահովում

Լաբորատոր հետազոտությունները պատշաճ և ճշգրիտ իրականացնելու նպատակով՝ ձեռք ենք բերել հետևյալ սարքավորումները

N	Անվանումը	քանակ
1	Օդի նմուշառման համար ասպիրատոր	1
2	Ծխագազերի նմուշառման համար գազանալիզատոր	1
3	Ջրի թթվածնի կենսաբանական պահանջարկի որոշման անալիզատոր	1
4	Ջրի թթվածնի կենսաբանական պահանջարկի որոշման համար թերմոստատ	1
5	Սպեկտրոֆոտոմետր՝ աղտոտված ջրերի անալիզի համար	1

Հարկ է նշել, որ ներկայումս լաբորատորիան զբաղեցնում է 230մ^2 տարածք, իր տեխնիկական հագեցվածությամբ չի համապատասխանում ժամանակակից

պահանջներին: Լաբորատորիան անալիտիկ հետազոտությունները և գազային միացությունների չափագրումը իրականացնում է 2006 թվականին նոյեմբերին համալրված սարքավորումներով, որոնց մի մասը թերկոմպլեկտավորված է և հնարավոր չէ շահագործել, իսկ մյուս մասն արդեն բարոյապես մաշվել է: Լաբորատորիան խիստ կարիք ունի շենքային պայմանների հիմնավերանորոգման և լաբորատոր գույքի և ժամանակակից սարքավորումների կահավորման: Նշված խնդրի կարգավորման նպատակով դիմել ենք Պետական գույքի կառավարման կոմիտեին Այգեձոր փողոցի 1-ին նրբ. թիվ 22 շենքի առաջին հարկի՝ 230 քմ մակերես տարածքը Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին ամրակցելու և մեկ այլ բարեկարգ տարածքով փոխարինելու համար:

Խորհրդատվական գործունեություն

Հասարակության տեղեկացվածության բարձրացման նպատակով Տեսչական մարմնի ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ նախատեսված 4 հարցազրույցի փոխարեն կազմակերպվել է 45-ը (2020թ.-ին նախատեսվել է 8, իրականացվել՝ 42, 2021թ.-ին նախատեսվել է 8, իրականացվել՝ 25):

Թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման նպատակով Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ ըստ ոլորտների տարեկան ծրագրով նախատեսված **15** իրազեկման աշխատանքի փոխարեն կատարվել է՝ 90-ը, այդ թվում տեսանյութեր, հայտարարություններ, հաշվետվություններ, որոնք հրապարակվել և տարածվել են Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում, սոցիալական ցանցերի Տեսչական մարմնի պաշտոնական էջերում և ԶԼՄ-ներում (2020թ.-ին նախատեսվել է 4, իրականացվել՝ 18, 2021թ.-ին նախատեսվել է 4, իրականացվել՝ 10):

Լուսաբանման, հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով ծրագրով նախատեսված **40** մամուլի հաղորդագրության փոխարեն հրապարակվել է **103-ը**, որոնց տարածումը ԶԼՄ-ներում հասել է 1373-ի (2020թ.-ին նախատեսվել է 24, իրականացվել՝ 217, 2021թ.-ին նախատեսվել է 24, իրականացվել՝ 129):

Ամենօրյա մոնիտորինգի արդյունքում ուսումնասիրվել է ոլորտի վերաբերյալ 1242 նյութ, որոնք ամփոփվել և վերլուծվել են, պատրաստվել է օրվա մամուլի տեսություն, ստեղծվել համակարգված արխիվ (2020թ.-ին՝ 4751, 2021թ.-ին՝ 870):

Տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացման, իրենց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկման ապահովման, բնապահպանության և ընդերքի ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման, հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվել են ուղեցույցեր, իրազեկման թերթիկներ, բուկլետներ:

Երևան քաղաքում և հանրապետության մարզերում կազմակերպվել է 11 իրազեկում-հանդիպում, որոնց ընթացքում ներկայացվել են «Ձկնարդյունաբերության թափոնների կառավարման ուղեցույց»-ը, «Բնապահպանական վերահսկողության մասին», «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքներում, ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխությունները և լրացումները, անտառտնտեսությունների տարածքում հաստատված հատատեղերի շահագործման ընթացակարգը, թափուկ փայտանյութի դուրս բերման մեխանիզմները, հողի բերրի շերտի օգտագործման, պահպանման կարգերը: (2020թ.-ին նախատեսվել է 12, իրականացվել՝ 12, 2021թ.-ին նախատեսվել է 12, իրականացվել՝ 12):

Իրազեկում-հանդիպումներին մասնակցել են 120-ից ավել տնտեսավարող սուբյեկտների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2022 թվականի ընթացքում մուտքագրվել է 77 դիմում-բողոք, որի շարժը ներկայացված է ստորև.

	Դիմումների քանակ	*Վերահասցեագրում*	*Սպուգում*	*Դիմումների ընթացք*	
				Պատասխան	*որից սպուգում կիրականացվի*
Քաղաքացի	52	22	1	44	5
Իրավաբանական անձ	25	3	2	-	-
Ընդամենը	**77**	**25**	**3**	**44**	**5**

Իրականացվել է թեժ գծի 119 հեռախոսահամարի և սոցիալական ցանցի Տեսչական մարմնի պաշտոնական էջի սպասարկում և վարում, որի ընթացքում գրանցվել է 219 ահազանգ (2020թ.-ին՝ 277, 2021թ.-ին՝ 255), որից՝

- թեժ գծի 119 հեռախոսահամարի միջոցով՝ 151, որից 77-ով տրվել է խորհրդատվություն (2020թ.-ին՝ 37, 2021թ.-ին՝ 56):
- ՀԼՄ-երի և սոցիալական հարթակների միջոցով՝ 68 (2020թ.-ին՝ 164, 2021թ.-ին՝ 135):

Ստացված ահազանգերի հիման վրա կազմվել է 142 զեկուցագիր, որոնց օրենքով սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք:

Երկրորդ եռամսյակի ընթացքում գործարկվել է Տեսչական մարմնի պաշտոնական նոր կայքէջը:

Թարմացվել են կառուցվածքի, նորությունների, կառավարման խորհուրդ, միջազգային համագործակցության, թափուր պաշտոնների, օրենսդրության և այլ բաժինները: Ապահովվել է տեղեկատվության հասանելիությունը, հետադարձ կապը, Տեսչական մարմնի գործունեության թափանցիկությունը: Տեսչական մարմնի պաշտոնական էջում տեղադրվել են մամուլի հաղորդագրություններ, տեսանյութեր, պարզաբանումներ, իրազեկումներ, հայտարարություններ և այլն:

Հրապարակվել է 2021 թվականի ընթացքում Տեսչական մարմին ստացված վարչական վարույթների, դիմում-բողոքների, հարցումների, ինչպես նաև թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Պատրաստվել և Յութուբ կայքի Տեսչական մարմնի պաշտոնական էջում հրապարակվել է **63** տեսահոլովակ/տեսանյութ (2020թ.-ին՝ 56, 2021թ.-ին՝ 52):

Սոցիալական ցանցի Տեսչական մարմնի պաշտոնական էջի հետևորդների թիվն ավելացել է 725-ով, հասնելով 6470-ի (2020թ.-ին՝ 4911, 2021թ.-ին՝ 5745):

«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում տարածաշրջանային համաժողովին ներկայացնելու նպատակով հայերեն և անգլերեն լեզուներով պատրաստվել և հրապարակվել է Տեսչական մարմնի գործունեության, գործառույթների, վերահսկողության ոլորտների վերաբերյալ ճանաչողական տեսահոլովակ:

Հանրապետության 30 դպրոցում կազմակերպվել է էկոկրթության վերաբերյալ դասաժամեր, որոնց մասնակցել են Տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալները, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Կազմակերպվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության, Կենսաբանության ֆակուլտետների ընդհանուր՝ 10 ուսանողի և մագիստրոսի մասնագիտական պրակտիկայի անցկացումը:

Միջազգային Հանրապետական Ինստիտուտի կողմից կազմակերպված «Հաղորդակցման ոլորտում միջգերատեսչական համագործակցություն, երկխոսություն ՋԼՄ ներկայացուցիչների հետ» խորագրով սեմինարի ընթացքում ներկայացվել է Տեսչական մարմնի գործունեությունը, իրականացված աշխատանքներն ու ծրագրերը, տեղեկատվության տրամադրման և հասանելիության ձևաչափերն ու այլն:

2022 թվականի տարեկան նախատեսված միջոցառումների ժամանակացույցի 9-րդ և 10-րդ կետերով կազմակերպվել և լուսաբանվել է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF Հայաստան) և Կովկասի բնության հիմնադրամի (CNF) կողմից ժամանակակից գույքի և սարքավորումների նվիրաբերման միջոցառումները:

Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն

Կարողությունների զարգացման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու և ամրապնդելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- 2022 թվականի տարվերջին ավարտվել է «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020-2022 թվականների «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկուս» համակարգով» ծրագրի շրջանակներում Սևանա լճի և ջրհավաք ավազանի բնապահպանական մոնիտորինգ (մոնիտորինգ) իրականացնելու աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ վարչապետի N 1326–Լ որոշմամբ սահմանված միջոցառումները: Աշխատանքներին ներգրավվել են 17 աշխատող, ովքեր ձեռք են բերել կարողություններ նորագույն տեխնոլոգիաներով Երկրի հեռահար դիտարկման հմտություններ՝ արբանյակներից ստացված տվյալների հավաքագրման, վերլուծման և համադրման մեթոդներով:
- 2022 թվականի դեկտեմբերի 5-ից 6-ը Բրյուսելում կայացել է «Լավագույն բնապահպանական վերահսկողությունը հանուն բնապահպանական կայունության» տարածաշրջանային համաժողովը: Հանդիպման ընթացքում Արևելյան գործընկերության վեց երկրի (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա) ներկայացուցիչները քննարկել են «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում մշակված բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման համակարգի գնահատման վերաբերյալ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) զեկույցի նախագծի արդյունքները: Համաժողովին առցանց մասնակցել են Տեսչական մարմնի աշխատողները, ներկայացվել է զեկույց ՀՀ-ում բնապահպանական վերահսկողական գործընթացը, ռիսկի վրա հիմնված մեթոդաբանությունը՝ կարևորելով շրջակա միջավայրի պահպանության հայեցակարգերի դերն ինչպես

ներպետական, այնպես էլ համաշխարհային հարթակներում: Ծրագրի մասնակիցների միջև տեղի է ունեցել բնապահպանական խնդիրների կառավարման մարտահրավերների և դրանց հավասարակշռված ու փոխգործակցված լուծումների վերաբերյալ փորձի փոխանակում:

- Տեսչական մարմնի աշխատողները մասնակցել են «Թվինինգ» ծրագրի շրջանակներում Չեխիայի Հանրապետությունում բնության պահպանության ոլորտում ճանաչողական այցի, որի շրջանակում քննարկվել է բնության պահպանության ոլորտին առնչվող ինստիտուցիոնալ և իրավական համակարգերի զարգացման հարցեր:
- Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք միջազգային կառույցների հետ ձեռք է բերվել փոխհամագործակցության պայմանավորվածություններ՝ Տեսչական մարմնի կարողությունների զարգացման, տեղեկատվության փոխանակման, մասնագետների վերապատրաստման, տեխնիկական աջակցության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Միջազգային գործընկերների կողմից տեսչական մարմնին նվիրաբերվել է 28,646,500 ՀՀ դրամ գումարի չափով գույք, մասնավորապես՝

- 3 անօդաչու թռչող սարք,
- 2 ավտոմեքենա,
- համակարգչային գույք և քարտեզագրման համակարգչային «PIX4D mapper» ծրագրի լիցենզիա:

Հաշվի առնելով նոր տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը՝ վերոհիշյալ լիցենզավորված ծրագրով Տեսչական մարմինն իրականացնում է անօդաչու թռչող սարքերի գործածությամբ ֆոտոգրամետրիկ համակարգերի միջոցով քարտեզների ստեղծում: Տվյալ անօդաչու սարքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստուգաչափվել է և ունի համապատասխան ստուգաչափման սերտիֆիկատ: Ֆոտոգրամետրիան լուսանկարչական պատկերներից չափերը որոշելու գիտություն է: Ֆոտոգրամետրիան, որպես կանոն, ծառայում է որոշակի իրական օբյեկտի կամ տարածքի քարտեզներ, գծագրեր կամ եռաչափ պատկեր ստանալու համար: Օդային

ֆոտոգրամետրիայի միջոցով 3D քարտեզներ ստեղծելու համար անօդաչու թռչող սարքը թռչում է ինքնավար ծրագրավորված հետագծով, երթուղու որոշակի կետերում պատկերները վերցվում են պատկերների բազմակի ծածկույթներով (մասնակի համընկնում): Սա հնարավորություն տվեց հասնել քարտեզների բարձր ճշգրտության և նույնիսկ ստեղծել օբյեկտների և լանդշաֆտի ճշգրիտ եռաչափ վերակառուցումներ: Միաժամանակ, ձեռք բերված արտադրանքի որակը անշեղորեն բարձրացել է:

Այսօր արդեն կան մի քանի առաջատարներ շուկայում մասնագիտացված քարտեզագրման և գեոդեզիայի ծրագրային ապահովման համար, որոնք օպտիմալ կերպով հարմար են DJI անօդաչու սարքերի հետ օգտագործելու համար: Դրանցից առանձնանում են Agisoft Metashape, Pix4D-ը: Արդյունքում, այսօր անօդաչու սարքերը և դրանց սպասարկող ծրագրերը լայնորեն կիրառվում է Տեսչական մարմնի կողմից: Նոր տեխնոլոգիաները հիմնովին փոխում են Տեսչական մարմի կողմից իրականացվող վերահսկողական գործընթացները՝ նվազեցնելով մարդկային ռեսուրսի ներգրավածությունը և ստուգման ընթացքում ծախսվող ֆինանսական միջոցները:

Հաջորդ քայլը նախատեսում ենք անօդաչու թռչող սարքերի վրա տեղադրել լիդարներ: Անօդաչու թռչող սարքերի համար լիդարի վրա տեղադրված է լազերային հեռավորության որոնիչ՝ անօդաչու թռչող սարքի տակ գտնվող տեղանքի կետերի բարձրությունը չափելու համար: Ինչն է, ըստ էության, լիդարի (օպտիկական տիրույթի ակտիվ հեռաչափի) էությունը. Լիդար հեռաչափերը կարող է հարյուրավոր քառակուսի կիլոմետրեր անցնել, չափելով 10-80 միավոր մեկ քառակուսի մետրի վրա, հնարավոր է ստեղծել շատ մանրամասն թվային տեղանքի մոդել: Լիդար սենսորները կարող են ներթափանցել անտառային ծածկույթ և բուսականություն, որոնք կարող են գրավել արբանյակներից անտեսանելի թաքնված տեղանքը, ինչպես նաև բավարար մանրամասնությամբ գրավել գետնի ծածկը՝ ապահովելով բուսականության փոփոխության դասակարգում և մոնիտորինգ:

Նկար 1. թվային տվյաների



Նկար 2. 3D թվային մոդելավորում



Նկար 3. Օրթոգրամետրիկ թվային մոդելի ստացում

Օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները

- Նորմատիվ իրավական ակտերի նախագծերում փոփոխություն և լրացում կատարելու 27 օրենսդրական նախագծի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ և կարծիքներ:

Կարողությունների զարգացում

- Հաշվի առնելով, որ տեսչական մարմնի պետական տեսուչների համազգեստը չէր համապատասխանում Հայաստանի Հանրապետության բնակլիմայական, աշխարհագրական և սեզոնային պայմաններին, ինչպես նաև բարձր լեռնային պայմաններին, տեսչական մարմնի պետական տեսուչների համազգեստները համապատասխանեցվել են ըստ սեզոնների, բնակլիմայական և աշխարհագրական պայմանների: ՀՀ կառավարության 18.08.2005թ. «Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պետական տեսուչի համազգեստի նկարագիրը և ձևը, պետական տեսուչի համազգեստի կրելու կարգն ու պայմանները հաստատելու մասին» N 2085-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 09.06.2022 թ. N 836-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների համաձայն քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակված 41 պետական տեսուչների համար ձեռք է բերվել լրակազմ համազգեստ: 2023 թվականի ընթացքում պլանավորվում է ապահովել համազգեստների շարունակական ձեռքբերումը:
- Տեսչական մարմնի և ՀՀ ոստիկանության համագործակցության շրջանակներում օրենքով իրենց վերապահված լիազորությունները լիարժեք իրականացնելու նպատակով տեսչական մարմնի աշխատողները Ոստիկանության կրթահամալիրում մասնակցել են տեսական և գործնական եռօրյա ուսումնառության: Դասընթացների ընթացքում ծանոթացել են ծառայողական զենք կրելու և գործադրելու կանոններին, հրաձգարանում անցկացրել կրակային պատրաստության վարժանքներ: Ուսումնառությունը հաջող անցած և թույլտվություն ստացած տեսչական

մարմնի աշխատողները ծառայության ընթացքում կկրեն ծառայողական զենք: 2023 թվականի ընթացքում պլանավորվում է ապահովել ուսումնառության և թույլտվության ստացման շարունակական գործընթացը:

- Բնապահպանության և ընդերքի ոլորտներում գործունեություն ծավալող Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում և մայրաքաղաքում տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ իրականացվում է վերահսկողություն, որի նպատակով 2023 թվականի ընթացքում պլանավորվում է տրանսպորտային միջոցների փոխարինում նորերով:

Հաստիքացուցակի փոփոխություն, թափուր հաստիքների համալրում

Վերակազմավորվել է իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչությունը: Ստեղծվել է 2 առանձին բաժին, դրանք են՝ իրավական աջակցության բաժին և փաստաթղթաշրջանառության բաժինը:

Հայտարարվել են թափուր աշխատատեղերի վերաբերյալ շուրջ 53 հայտարարություններ, որոնք համալրվել են:

Աշխատողների խրախուսում և ծառայողական քննություններ

- 2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ղեկավարի կողմից շնորհակալագրով խրախուսվել են 26 աշխատող:
- Ծառայողական քննության արդյունքներով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 8 աշխատող (Աղյուսակ 11):

Աղյուսակ 11

h/h	***Ժամանակահատվածը***	***Ծառայողական քննության արդյունքում կայացվել է որոշում***		
		Կարգապահական խախտման առկայության մասին	***Կարգապահական խախտման բացակայության մասին***	***Անհետևանք***
1	*2*	*3*	*4*	*5*
1	***2020 թվական***	3	2	3
2	***2021 թվական***	3	4	0
3	***2022 թվական***	2	0	6

Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ, բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումներ

Տեսչական մարմին վերադասության կարգով բողոքարկված գործեր							
h/h	**Տնտեսավարողի անուն ազգանունը**	**Բողոք բերելու ամսաթիվ**	**Որոշման համարը**	**Որոշման ամսաթիվը**	**Վարչական տուգանքի չափը (ՀՀ դրամ)**	**կարգավիճակ**	
1	Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Մարտունի բնակավայրի ղեկավար Վահրամ Հովհաննիսյանին որոշումը հանձնելու օրվան հաջորդող օրը	05.01.2022	Որոշում թիվ 5	25.01.2022	200. 000	Դատական փուլում	1-ին եռամսյակ
2	Կարեն Նազարյան	07.01.2022	Որոշում թիվ 6	27.01.2022	200. 000	Գործը կարճվել է	
3	Մարիաննա Շահինյան	20.12.2021	Որոշում թիվ 13	18.02.2022	300. 000 վճարված է	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	

4	Անահիտ Գիչյան	18.04.2022	Որոշում թիվ 26	06.05.2022	Ոչ նյութական պահանջ	Ստուգման ակտը անփոփոխ թողնելու մասին	2-րդ եռամսյակ
5	Տարոն Ֆահրադյան	28.04.2022	Որոշում թիվ 29	23.05.2022	150. 000 վճարված է	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	
6	Սոնա Մանուկյան	23.05.2022	Որոշում թիվ 31	15.06.2022	80. 000	Որոշումը բեկանելու և գործի վարույթը կարճելու մասին	
7	Մարիաննա Շահինյան	09.09.2022	Որոշում թիվ 49	23.09.2022	500. 000	Գործը կարճվել է	3-րդ եռամսյակ
8	Արտակ Ադամյան (ԷԼԲԻՍ ՍՊԸ)	24.08.2022	Որոշում թիվ 50	23.09.2022	20. 105. 196 (վնաս) ընթացքի մեջ	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	
9	Արտակ Ֆարզադյան	04. 10. 2022	Որոշում թիվ 58	18. 10. 2022	Ոչ նյութական պահանջ	Վարչական բողոքը բավարարելու մասին	4-րդ եռամսյակ

10	Նարեկ Տոնոյան	23. 09. 2022	Որոշում թիվ 70	18. 11. 2022	Ոչ նյութական պահանջ	Վարչական բողոքը մասնակի բավարարելու մասին	
11	Նարեկ Տոնոյան	23.09.2022	Որոշում թիվ 71	18. 11. 2022	200 000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	
12	Նարեկ Տոնոյան	17. 10. 2022	Որոշում թիվ 72	18. 11. 2022	100 000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	
13	Նարեկ Տոնոյան	17. 10. 2022	Որոշում թիվ 73	18. 11. 2022	100 000	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	
14	Նարեկ Տոնոյան	17. 10. 2022	Որոշում թիվ 73	18. 11. 2022	18 944 586 վերահաշվարկվել է 6 243 274	Վարչական բողոքը մասնակի բավարարելու մասին	
15	Լևոն Գեղամյան («Դելտա Քնսթրաքշն» ՍՊԸ)	27. 10. 2022	Որոշում թիվ 75	22. 11. 2022	831 433	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	

16	Գեղամ Աբրահամյան	17. 10. 2022	Որոշում թիվ 83	28. 12. 2022	150 000 տուգանք, 41 000 վնաս	Որոշումն անփոփոխ թողնելու մասին	

Տեսչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթներ							
h/h	**Տնտեսավարողի անուն ազգանունը**	**Որոշման համարը**	**Որոշման ամսաթիվը**	**Վարչական տուգանքի չափը ՀՀ դրամ**	**Պետությանը պատճառված վնասի չափը ՀՀ դրամ**	**Կարգավիճակ**	
1	«Յուլի-Դալի» ՍՊԸ	Որոշում թիվ 1	13.01.2022	50. 000		Վճարված	1-ին եռամսյակ
2	«Յուլի-Դալի» ՍՊԸ	Որոշում թիվ 2	13.01.2022	100. 000		Վճարված	
3	«Յուլի-Դալի» ՍՊԸ	Որոշում թիվ 3	13.01.2022		23. 040	Վճարված	
4	«Կարմիր տուֆ» ՍՊԸ	Որոշում թիվ 7	03.02.2022	100. 000		Դատական փուլում	

5	«Կարմիր տուֆ» ՍՊԸ	Որոշում թիվ 8	03.02.2022	100. 000			
6	«Կարմիր տուֆ» ՍՊԸ	Որոշում թիվ 9	03.02.2022	50. 000			
7	«Կարմիր տուֆ» ՍՊԸ	Որոշում թիվ 10	03.02.2022		30. 543		
8	«Կարիսմա» ՍՊԸ	Որոշում թիվ 11	04.02.2022			Գործը կարճվել է, նյութերն ուղարկվել է դատախազություն	
9	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ	Որոշում թիվ 15	25.02.2022		22. 260. 776	Վճարված	
10	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ	Որոշում թիվ 16	25.02.2022		136. 120. 000	Վճարված	
11	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ	Որոշում թիվ 17	25.02.2022	100. 000		Վճարված	

12	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ	Որոշում թիվ 18	25.02.2022	150. 000		Վճարված	
13	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ	Որոշում թիվ 19	25.02.2022	300. 000		Վճարված	
14	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ	Որոշում թիվ 20	25.02.2022	200. 000		Վճարված	
15	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ	Որոշում թիվ 21	25.02.2022	100. 000		Վճարված	
16	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ	Որոշում թիվ 22	25.02.2022	100. 000		Վճարված	
17	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ	Որոշում թիվ 23	25.02.2022	150. 000		Վճարված	

18	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ «Ամուլսարի ոսկու ծրագիր»	Որոշում թիվ 25	11.03.2022	50. 000	ԴԱՀԿ		
19	«Առափ» ՍՊԸ	Որոշում թիվ 27	13.05.2022	150. 000		Վճարված	2-րդ եռամսյակ
20	«Առափ» ՍՊԸ	Որոշում թիվ 28	13.05.2022	100. 000		Վճարված	
21	«Դրուզյա» ՍՊԸ	Որոշում թիվ 32	14.06.2022	150. 000		Վճարված	
22	«Դրուզյա» ՍՊԸ	Որոշում թիվ 33	14.06.2022	100. 000		Վճարված	
23	«Լանջաքար» ՍՊԸ	Որոշում թիվ 34	28.06.2022	100. 000		Վճարված	
24	«Եղվարդշին» ԲԲԸ	Որոշում թիվ 35	06.07.2022	100. 000		Վճարված	3-րդ եռամսյակ
25	«Վայոց ձոր Ֆրուկտ» ՍՊԸ	Որոշում թիվ 36	15.07.2022	100. 000		Վճարված	
26	«ԵՎԱ-Շին 2009» ՍՊԸ	Որոշում թիվ 37	28.07.2022	100. 000	ԴԱՀԿ	Չվճարված	

27	«Արսեն 96» ՍՊԸ	Որոշում թիվ 38	05.08.2022	250. 000	ԴԱՀԿ	Չվճարված	
28	«Հերուհուշ» ՍՊԸ	Որոշում թիվ 39	08.08.2022	150. 000		Վճարված	
29	«Հերուհուշ» ՍՊԸ	Որոշում թիվ 40	08.08.2022	50. 000		Վճարված	
30	«Հերուհուշ» ՍՊԸ	Որոշում թիվ 41	08.08.2022	100. 000		Վճարված	
31	«Հերուհուշ» ՍՊԸ	Որոշում թիվ 42	08.08.2022		126. 538	Վճարված	
32	«Բիլումե» ՍՊԸ	Որոշում թիվ 43	15.08.2022	50. 000		Վճարված	
33	«Բիլումե» ՍՊԸ	Որոշում թիվ 44	15.08.2022	100. 000		Վճարված	
34	«Բիլումե» ՍՊԸ	Որոշում թիվ 45	15.08.2022		419. 230	Վճարված	
35	«ԷՍ ՋԻ Գրուպ» ՍՊԸ	Որոշում թիվ 48	16.09.2022	100. 000		Վճարված	

36	«Հիդրո» ՍՊԸ	Որոշում թիվ 51	28.09.2022	100. 000		Վճարված	
37	«Աննա հանք» ՍՊ	Որոշում թիվ 52	12. 10. 2022	100. 000		Չվճարված	4-րդ եռամսյակ
38	«Աննա հանք» ՍՊ	Որոշում թիվ 53	12. 10. 2022	50. 000		Չվճարված	
39	«Աննա հանք» ՍՊ	Որոշում թիվ 54	12. 10. 2022		39. 360	Չվճարված	
40	«Արմսթոն» ՍՊԸ	Որոշում թիվ 55	17. 10. 2022	100. 000		Չվճարված	
41	«Արմսթոն» ՍՊԸ	Որոշում թիվ 56	17. 10. 2022	50. 000		Չվճարված	
42	«Արմսթոն» ՍՊԸ/ Նարեկ Խաչատրյան	Որոշում թիվ 57	17. 10. 2022		259. 358	Չվճարված	
43	«Նաիրի» ՍՊԸ	Որոշում թիվ 58	08. 11. 2022	100. 000		Չվճարված	
44	«Շողագա» ՍՊԸ	Որոշում թիվ 62	22. 11. 2022	100. 000		Չվճարված	

45	«Շողագա» ՍՊԸ	Որոշում թիվ 63	22. 11. 2022	100. 000		Չվճարված	
46	«Շողագա» ՍՊԸ	Որոշում թիվ 64	22. 11. 2022	100. 000		Չվճարված	
47	«Շողագա» ՍՊԸ	Որոշում թիվ 65	22. 11. 2022	100. 000		Չվճարված	
48	«Շողագա» ՍՊԸ	Որոշում թիվ 66	22. 11. 2022	100. 000		Չվճարված	
49	«Շողագա» ՍՊԸ	Որոշում թիվ 67	22. 11. 2022	100. 000		Չվճարված	
50	«Շողագա» ՍՊԸ	Որոշում թիվ 68	22. 11. 2022		1. 536. 000	Չվճարված	
51	«Ար Քնսրաքշն» ՍՊԸ	Որոշում 76	29. 11. 2022	50. 000		Չվճարված	
52	«Ար Քնսրաքշն» ՍՊԸ	Որոշում 77	29. 11. 2022	100. 000		Չվճարված	
53	«Ար Քնսրաքշն» ՍՊԸ	Որոշում 78	29. 11. 2022	297. 562		Չվճարված	
54	«Ար Քնսրաքշն» ՍՊԸ	Որոշում 79	29. 11. 2022		297. 562	Չվճարված	

55	«Գոլդեն Սթոուն» ՍՊԸ	Որոշում թիվ 80	14. 12. 2022	100. 000		Չվճարված	
56	«Գոլդեն Սթոուն» ՍՊԸ	Որոշում թիվ 80	14. 12. 2022		1. 658. 120	Չվճարված	

- Դատարան է ներկայացվել 23 հայցադիմում, որոնցից 10-ը՝ դրամական պահանջով 89.571.875 ՀՀ դրամ (աղյուսակը ստորև) իսկ 13-ը՝ առգրավված առարկան (զենք) բռնագրավելու պահանջով:
- Դրամական պահանջով ներկայացված հայցադիմումներից 6-ը բավարարվել է, 4-ը ընթաքի մեջ են:

Դրամական պահանջով ներկայացված հայցադիմումներ				
Գործի համարը	**Գումարի չափը ՀՀ դրամ**	**Հայցվոր**	**Պատասխանող**	**Կարգավիճակը**
ԱՎԴ4/0935/02/22	3 813 821	ԲԸՏՄ	«Եղեգիէկ» ՍՊԸ	Ընդունվել է վարույթ
ԱՎԴ2/1934/02/22	37 464 768	ԲԸՏՄ	«Ռապս» ՍՊԸ	Ընդունվել է վարույթ
ԵԴ/52735/02/22	45 606 520	ԲԸՏՄ	«ԱՏ_ Մետալս»	Ընդունվել է վարույթ
ԳԴ/0010/02/22	105 000	ԲԸՏՄ	Վիկտոր Վառյան	Հայցը բավարարվել է 30.06.2022
ՏԴ/1629/02/22	54 000	ԲԸՏՄ	Արման Գրիգորյան	Հայցը բավարարվել է 01.06.2022
ՏԴ/0224/02/22	60 000	ԲԸՏՄ	Վահե Ադամյան	Հայցը բավարարվել է 01.06.2022
ՏԴ/0215/02/22	54 000	ԲԸՏՄ	Սարգիս Հակոբյան	Հայցը բավարարվել է 01.06.2022
ԼԴ2/0057/02/22	111 600	ԲԸՏՄ	Արարատ Թամազյան	Հայցը բավարարվել է 10.05.2022

ԵԴ/35786/02/22	2 156 700	ԲԸՏՄ	«Դորոժնիկ»ՍՊԸ	Ընդունվել է վարույթ
ԱՎԴ/6947/02/21	146 066	ԲԸՏՄ	Լաերտ Ռաֆիկի Գևորգյան	Հայցը բավարարվել է

- Ներկայացվել է թվով 15 վերաքննիչ բողոք:
- ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտերի դեմ բերվել է թվով 2 վճռաբեկ բողոք:
- Ներկայացվել են՝ 1-ին եռամսյակում՝ թվով 3 հայցադիմումի պատասխան և/կամ դիրքորոշում, 2-րդ եռամսյակում՝ 14 հայցադիմումի պատասխան և/կամ դիրքորոշում, 3-րդ եռամսյակում՝ 12 հայցադիմումի պատասխան և/կամ դիրքորոշում, 4-րդ եռամսյակում ներկայացվել են թվով 6 հայցադիմումի պատասխաններ և/կամ դիրքորոշումներ, ընդհանուր առմամբ 2022 թվականի ընթացքում 2022 թվականի և նախկինում վարույթ ընդունված գործերով ներկայացվել է 35 հայցադիմումի պատասխան կամ դիրքորոշում:
- Ընթացքի մեջ են ընդհանուր առմամբ 82 դատական գործ:
- Վերադասության կարգով ներկայացվել է 16 գործ:
- Տեսչական մարմնի նախաձեռնությամբ հարուցվել է 56 վարչական վարույթ: